ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Է. Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԹՌՉՈՒՆՆԵՐ
ՀԱՄԱՌՈՏ ԴԱՇՏԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 598.2
ԳՄԴ 28.693.35
Ե 381

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Գրախոսներ՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ս. Խ. Պիպոյան**
կենս. գիտ. թեկնածու, դոցենտ **Ն. Հ. Մարգարյան**

Եղիազարյան Է. Մ.
Ե 381 Թռչուններ: Համառոտ դաշտային ուղեցույց/
Եղիազարյան Է. Մ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 142 էջ:

Հայաստանի Հանրապետությունում տարածված են շուրջ 350 տեսակի թռչուններ:

Գրքույկում նկարագրված են թռչունների 16 կարգերի 143 տեսակներ, որոնք հանդիպում են հանրապետության տարածքում կամ չվահյուրեր են: Տրված են դրանց արտաքին տեսքի և էկոլոգիայի համառոտ նկարագրերը:

Գրքույկը նախատեսված է պատանի բնասերների, ուսուցիչների, ուսանողների և բնությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 598.2
ԳՄԴ 28.693.35

ISBN 978-5-8084-2227-8

© ԵՊՀ հրատ., 2017
© Եղիազարյան Է. Մ., 2017

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բնության գրկում թռչուններին դիտելը յուրաքանչյուրին մեծ բավականություն է պատճառում: Այդ ընթացքում ցանկություն է առաջանում նաև իմանալու, թե որ թռչնին ես հանդիպել:

Բնության մեջ թռչունների որոշման հիմնական պայմաններն են՝

- թռչունների դիտումն ավելի նպատակահարմար է կատարել մենակ կամ փոքր խմբով (10 հոգուց ոչ ավելի).
- հարմար է օգտագործել 6-8 անգամ խոշորացնող հեռադիտակ.
- սկսնակ բնասերի համար ամենահարմար սեզոնը ձմեռն է, քանի որ փոքր է տեսակների թիվը, դրանցից շատերը դառնում են վախկոտ և հանդիպում են նաև բնակավայրերի մոտակայքում: Դիտումներ կատարելու դասական սեզոնը գարունն է և ամռան սկիզբը (թռչունների բնադրման ժամանակաշրջանը, երբ դրանք ավելի նկատելի են դառնում զուգավորման վարքի՝ կտղուցականչի, երգելու ժամանակ, նաև կապվում են բնակալման տարածքին).
- տեսակի որոշման համար պետք է ***ճանաչել*** թռչնին և ***տարբերել*** մյուսներից: Տարբերիչ հատկանիշներն են չափերը, գունավորումը, թռչնի ընդհանուր տեսքը (մարմնի և փետուրների, փուփուլի, պոչի, թևերի ձևերը,), ապրելավայրը (բնադրման շրջանում), ձայնը, վարքը և շարժումների ձևերը (թռիչքի բնույթը, թռչելիս թևերի «աղմուկը», վարքը սնվելու և կտղուցականչի ժամանակ, տեղաշարժվելը գետնի կամ ճյուղերի վրա): Նշված այս հատկանիշներից յուրաքանչյուրի օգնությամբ թռչնին կարելի է որոշել մոտավոր կերպով՝ մինչև կարգը կամ ընտանիքը, և միայն բոլոր հատկանիշների հաշվառումով է հնարավոր տեսակի ճիշտ որոշումը կամ գոնե հստակ ***առանձնացումը***, ***տարբերակումը*** մյուսներից, որոնք հետագա ճշգրտման արդյունքում հանգեցնում են տեսակի որոշմանը.

➢ գրառումների կատարումը, թռչնի ընդհանուր տեսքի նկարելը և լուսանկարումը կտրուկ բարձրացնում են դիտարկումների գիտական նշանակությունը:

Տեսակների նկարագրությունը

Գրքերում տեսակի նկարագրության ժամանակ, որպես կանոն, պահպանվում է հետևյալ սխեման

Չափերը: Թռչունը համեմատվում է չափերով մոտ, հայտնի տեսակների հետ (ներկայացվում է սանտիմետրերով՝ մարմնի երկարությունը կտցի ծայրից մինչև պոչի ծայրը):



ճնճղուկ	*սարյակ*	*թխակապույտ աղավնի*	*ագռավ մոխրագույն*	*ընտանի բադ*
14 սմ	*20 սմ*	*35 սմ*	*49 սմ*	*55 սմ*

Արտաքին տեսքը հարսանեկան հագուստով: Եթե նկատելի տարբերություններ չկան, ապա արուի և էգի նկարագրությունն ընդհանուր է,

➢ Ապրելավայրը:
➢ Մնունդը:
➢ Տեսակի էկոլոգիան:

♂նշանը (վահանը և նիզակը Մարսի՝ պատերազմի աստվածի խորհրդանիշն է) նկարի մոտ նշանակում է արու, իսկ ♀ (հայելի՝ Վեներայի խորհրդանիշը)՝ էգ:

ԹՌՉՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԱՊՐԵԼԱՎԱՅՐԻ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՄԵՋՈՆԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ

Բնադրող տեսակներ

Բներ են կառուցում, ձվեր դնում և ճտեր հանում ապրելավայրի տարածքում:

Խիստ նստակյաց տեսակները ողջ կյանքն անցկացնում են բնադրման տարածքում (թխակապույտ աղավնի, բվեճ):

Կիսագաղթող թռչուններն ունեն ձմեռելու որոշակի վայրեր, իսկ բնադրման շրջանից դուրս անընդհատ կատարում են տեղաշարժեր՝ տարբեր ուղղություններով, երբեմն բնադրման վայրից հեռանալով տասնյակ, հարյուրավոր, անգամ հազարավոր կիլոմետրեր (բվեր, բվիկներ):

Չվող թռչունները ձմեռում են համեմատաբար հեռու, որոշակի շրջաններում՝ ինչպես տեսակի բնադրման շրջանի (***մոտակա միգրանտներ***), այնպես էլ դրա սահմաններից շատ հեռու (***հեռավոր միգրանտներ***): Այս թռչուններին բնորոշ են չուի որոշակի ուղղություններն ու հստակ ժամկետները:

Ձմեռող տեսակներ: Չեն բնադրում գրաված տարածքի սահմաններում, հանդիպում են (ոչ կանոնավոր) միայն աշուն-ձմեռ շրջանում (որոշ ճուռակներ):

Չվանցող տեսակներ: Չեն բնադրում գրաված տարածքի սահմաններում, հանդիպում են գարնանային-աշնանային թռիչքների ժամանակ, հազվադեպ նաև միայնակ կամ փոքր երամներով թռչող ոչ սեռահասուն կամ տարբեր պատճառներով (վնասվածքներ, հիվանդություններ, ձվակույտի կորուստ) տվյալ տարում չբնադրած առանձնյակները:

Պատահմամբ թռած-եկած և պատահական տեսակներ: Տարբեր սեզոնների հազվադեպ հանդիպում են աշխարհի այլ շրջաններին բնորոշ (երբեմն շատ հեռավոր) տեսակների միայնակ առանձնյակներ: Դրանք արհեստական պայմաններում պահելու համար բերված էկզոտիկ տեսակների ներկայացուցիչներ են, նաև նոր տեսակի կլիմայավարժեցման նպատակով անհաջող փորձերի արդյունքում բաց թողած թռչուններ:

ՎԱՐՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զուգավորման վարք

Կտղուցականչ: Թռչունների յուրահատուկ վարք է՝ զուգընկերոջը գրավելու և նրան զուգավորմանը նախապատրաստելու նպատակով: Տարբեր տեսակների շրջանում դրսևորվում է երգի ու կանչերի, մեխանիկական ձայնային ազդանշանների (թևերի թափահարում, կտցազարկ, փետուրների վիբրացիա), կտղուցականչի արարողաթռիչքների և բարդ տարրերով օդային թռիչքների (շրջվելով վայրասլաց թռիչքներ), յուրատեսակ ցուցադրական դիրքերի, միմյանց հետ բախումներով և կռիվներով խմբակային կտղուցականչերի, «հարսանեկան խաղերի» (զուգընկերոջ համընթաց բարդ վարք) ձևով:

Միամուսնություն՝ մոնոգամիա: Բազմացումն ապահովելու համար զույգի ձևավորումը երկար ժամանակով՝ (կռունկներ, բվեր, որորներ) կամ բազմացման մեկ սեզոնի ընթացքում (ճնճղուկանմաններ):

Բազմակնություն՝ պոլիգամիա: Զույգերը չեն ձևավորվում նույնիսկ կարճ ժամանակով, և էգը զուգավորվում է տարբեր արուների հետ: Հետագայում նա էլ հոգում է ճուտիկների ձվից դուրս գալն ու կերակրելը:

Տարածքային և բնադրման վարք

Բների օգտագործումը: Հատուկ տեղ է ձվադրելու, թխսելու և ճուտիկներին կերակրելու համար: Բնի կառուցումը կարող է բացակայել (այծկիթեր, բվեր), լինել շատ պարզ (կաչաղակներ, հավանմաններ) կամ մասնագիտացած՝ բարդ կառույցների տեսքով (սուզահավերի լողացող բները, փայտփորների փչակները):

Գաղութային բնադրում: Բները գաղութում տեղադրված են իրարից մի քանի սանտիմետրից մինչև մի քանի մետր հեռավորության վրա (որորներ, ձկնկուլներ, սուզահավեր):

Միայնակ բնադրում: Բներն իրարից բավական հեռավորության վրա են (տեսակների մեծ մասը):

Բնի տարածքի պահպանությունը: Միայնակ բնադրող թռչունների տեսակների մեծ մասի արուներն ակտիվորեն պաշտպանում են բնադրման տարածքը կամ դրա կենտրոնական մասը՝ իր կամ այլ տեսակների ներխուժումից:

Ճուտիկների զարգացման տիպերը: Ձվից դուրս գալու ժամանակ, ըստ հասունության աստիճանի, տարբերում են՝ ***ա) բնախույս՝ մատուրանտ*** (ձվից դուրս են գալիս միանգամայն ձևավորված, աղվամազով պատված, աչքերը բաց ճուտիկներ, որոնք արագ լքում են բույնը և սկսում ինքնուրույն կեր հայթայթել): Օրինակ՝ սագանմանները, հավանմանները: ***բ) բնակալ՝ իմմատուրանտ*** (ձվից ճտերը դուրս են գալիս անօգնական, կույր, մերկ կամ թեթևակի աղվամազով, աչքերը և լսողական անցքերը՝ փակ, բնում մնում են երկար ժամանակ ու կերակրվում ծնողների կողմից): Օրինակ՝ մանգաղաթները, փայտփորները, աղավնիները, ներկարարանմանները: ***գ) միջանկյալ՝ կիսաբնախույս,*** օրինակ՝ սուզահավերը, սուզակները, որորները, այծկիթները (ճուտիկները լավ զարգացած են, կարող են տեղաշարժվել, սակայն ծնողների կողմից կերակրվում են երկար ժամանակ) կամ ցերեկային գիշատիչները, բվերը, արագիլները (ճուտիկները պատված են աղվամազով,

աչքերը բաց են կամ բացվում են շատ արագ, սակայն բույնը լքում են լրիվ փետրակալվելուց հետո, երբ արդեն պատրաստ են թռչելու):

ՓԵՏՐԱՎՈՐՄԱՆ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄԸ

Փետրավորման փոփոխման հաջորդականությունը

Սաղմնային «հագուստ»: Աղվամազով ճուտիկը դուրս գալիս ձվից: Առկա է բոլոր տեսակների մոտ, բացի փայտփորներից, ներկարարներից, կկուներից: Բնախույս և կիսաբնախույս աղվամազը խիտ է, ունի պաշտպանական-քողարկող նշանակություն:

Երկրորդ սաղմնային «հագուստ»: Ավելի երկար և այլ գունավորում ունեցող աղվամազն է: Առկա է միայն սուզահավերի, բազեանմանների մոտ:

Բնային, ճուտիկային կամ «պատանեկան հագուստ»: Սաղմնային աղվամազը փոխարինվում է ծածկութային և եզրագծային փետուրներով, աճում են թափա- և ղեկափետուրները: Այս փետրավորումը նոսր է և անշուք՝ արուների և էգերի վերջնական փետրավորման համեմատ: Այս **«հագուստով»** ճուտիկներն արդեն պատրաստ են թռիչքի:

Տարեկան «հագուստ»: Ի հայտ է գալիս տարեկան լրիվ փետրափոխության արդյունքում: Այն թռչունները, որոնք տարեկան ունենում են մեկ փետրափոխություն, դա **հարսանեկան** «հագուստն» է: Լրիվ փետրափոխությունը տեղի է ունենում ամռան վերջին, աշնան սկզբին: Որոշ տեսակների մոտ սկսվում է ձվադրման հետ միաժամանակ (ճուռակ, անտառային աղավնի), մյուսների մոտ՝ ավելի շուտ ճուտիկների ձվից դուրս գալուց հետո (որոշ կտցարներ): Տեսակների մի մասի մոտ փետրափոխությունը սկսվում է բազմացումից հետո, ընդհատվում է աշնանային չուի շրջանում և ավարտվում ձմեռելու վայրերում (որորներ, կրետակերներ, ջրածիծառներ, կկուներ, այծկիթներ, տատրակներ): Ջրի մոտ ապրող մի շարք տեսակներ թափափետուրների միաժամանակյա թափ-

վելու պատճառով զրկվում են թռչելու ընդունակությունից (սուզահավեր, սուզակներ, բադեր, կռունկանմաններ):

Անցումային տարեկան «հագուստ»: Բնորոշ է որորներին և արծիվներին, որոնց վերջնական տարեկան «հագուստը» ի հայտ է գալիս միայն կյանքի երկրորդ կամ երրորդ տարում:

Միջանկյալ տարեկան «հագուստ»: Էրիվ փետրափոխությունից հետո հանդիպում է այն տեսակների մոտ, որոնք ձմռան վերջում, գարնանը ունենում են երկրորդ, մասնակի նախահարսանեկան փետրափոխություն (բադեր, շատ արագիլանմաններ և քարադրանմաններ): Որպես կանոն, այս «հագուստով» արուն և էգն իրար նման են: Նախահարսանեկան փետրափոխության արդյունքում փոխվում է գլխի և մարմնի գծափետուրների միայն մի մասը, և ձևավորվում է «հարսանեկան հագուստը»:

Սեռական երկձևություն՝ դիմորֆիզմ: Արուների և էգերի միջև չափերի, գունավորման կամ փետրավորման ձևի տարբերությունն է: Թռչունների շատ տեսակների արուները պարզապես ավելի խոշոր են էգերից: Գունավորման երկձևությունն ավելի ցայտուն է արտահայտված բադերի «հարսանեկան հագուստում», արուները վառ են ու բազմերանգ: Երբեմն արուների մոտ զարգանում է նաև լրացուցիչ տարր՝ օձիքի տեսքով հատուկ փետուրներ (կռվակտցար):

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԵՍՔՈՎ




Կարգ՝ **Սագանմաններ**
Anseriformes
սագ
կարապ
մոխրագույն
ագռավ
սուզաբադեր
գետի բադեր
սղոցակտուցներ


Կարգ՝ Արագիլանմաններ
Ciconiiformes
փոքր ջրցուլ
մեծ ջրցուլ
մոխրագույն
ագռավ
մոխրագույն
տառեղ
արագիլ


Կարգ՝ Բազեանմաններ
Falconiformes
մկնաճուռակ
արծիվներ
ցին
մոխրագույն
ագռավ
ճուռակ
ճուռակներ
կրետակեր,
օձակեր
բազե
ջրարծիվ


Կարգ՝ **Հավանմաններ**
Galliformes
մարեհավ
աքար
կաքավ
մոխրագույն
ագռավ
լոր
մոխրագույն
կաքավ


Կարգ՝ Կռունկանմաններ
Gruiformes
ջրահովվիկ
կռունկ
մեծ ճահճահովվիկ
մարգահավ
եղեգնահավ
սև փարփար
մոխրագույն
ագռավ


Կարգ՝ **Քարադրանմաններ**
Charadriiformes
Ենթակարգ՝
Կտցարներ
Charadrii
կտցար
ծխագույն
մորակտցար
անտառակտցար
թխակապույտ
աղավնի
մեծ իլիկակտցար
կիվիվ
քարադր
մեծ արորիկ
կտցար
կաչաղակ


Կարգ՝ Բվանմաններ
Strigiformes
եվրոպական բվիկ
թավշառտ բու
տնային բվիկ
թխակապույտ աղավնի
բվեճ
անտառաբու
ականջավոր բու
ճահճային բու


Կարգ՝ Աղավնանմաններ
Columbiformes
սովորական տատրակ
օղակավոր տատրակ
թխակապույտ աղավնի
հոբալ
Անտառային աղավնի
Կարգ՝ Մանգաղաթևանմաններ
Apodiformes
սև մանգաղաթև


Կարգ՝ Կկվանմաններ
Cuculiformes
սովորական կկու
Կարգ՝ Այծկիթանմաններ
Caprimulgiformes
սովորական այծկիթ
Կարգ՝ Ներկարարանմաններ
Coraciiformes
ներկարար
ալկիոն
մեղվակեր
հոպոպ

Կարգ՝
Փայտփորանմաններ
Piciformes

սև փայտփոր

վիզգցուկ

խայտաբղետ փայտփոր

սովորական փայտփոր

փոքր փայտփոր

Կարգ՝ **Ճնճղուկանմաններ**
Passeriformes

արտույտ

ծիծեռնակ

սարյակ

երաշտահավ

ճանճորս

ամուրիկ

շամփրուկ

կեռնեխ

շահրիկ

եղեգնաթռչնակ գեղգեղիկ դրախտապան խաղտտիկ սերմնաքաղ

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գրքույկում ընդգրկված թռչունների կարգաբանությունը՝

Թագավորություն՝ **Կենդանիներ** - *Animalia*

Տիպ՝ **Քորդավորներ** - *Chordata*

Դաս՝ **Թռչուններ** - *Aves*

Կարգերը գրքույկում ներկայացված են հետևյալ հերթականությամբ՝

Կարգ՝ **Սուզակահավանմաններ** – *Gaviiformes (23)*

Կարգ՝ **Սուզականմաններ** – *Podicipediformes (24)*

Կարգ՝ **Արագիլանմաններ** – *Ciconiiformes (28)*

Կարգ՝ **Սագանմաններ** – *Anseriformes (34)*

Կարգ՝ **Բազեանմաններ** – *Falconiforms (46)*

Կարգ՝ **Հավանմաններ** – *Galliformes (60)*

Կարգ՝ **Կռունկանմաններ** – *Gruiformes (62)*

Կարգ՝ **Քարադրանմաններ** – *Charadriiformes (66)*

Կարգ՝ **Աղավնանմաններ** – *Columbiformes (79)*

Կարգ՝ **Կկվանմաններ** – *Cuculiformes (83)*

Կարգ՝ **Բվանմաններ** – *Strigiformes (85)*

Կարգ՝ **Այծկիթանմաններ** – *Caprimulgiformes (90)*

Կարգ՝ **Մանգաղաթևանմաններ** – *Apodiformes (92)*

Կարգ՝ **Ներկարարանմաններ** – *Coraciioformes (94)*

Կարգ՝ **Փայտփորանմաններ** – *Piciformes (98)*

Կարգ՝ **Ճնճղուկանմաններ** – *Passeriformes (103)*

ՍԵՎԱԽԱՇԻ ՍՈՒԶԱՀԱՎ
Gavia arctica



Ընտանի բադից մի քիչ մեծ է: Գլուխը և պարանոցի վերևը մոխրագույն է, մեջքը՝ սև, վառ ու լայն շերտերով, փորիկը՝ սպիտակ:

➢ ***Պատահական չվահյուր է:***

➢ ***Ապրելավայրը*** անտառային և անտառատափաստանային գոտու լճերն են:

➢ ***Սնվում է*** մանր և միջին չափերի ձկներով, խեցգետնակերպերով, միջատներով:

Շատ լավ լողում և սուզվում է (ջրի տակ կարող է մնալ մինչև 1 րոպե): Ցամաքում տեղաշարժվում է սողալով, թռչում է միայն ջրից՝ թափավազքով և միայն քամուն հակառակ: Բույնը ափին է՝ ջրի մոտ, դնում է 2 ձու, թխսում 28-30 օր: Ճուտիկները բնախույս են՝ արագ լքում են բույնը, սակայն կերակրվում են ծնողների կողմից՝ մինչև լրիվ ինքնուրույն դառնալը: Սկսում են թռչել 60-65 օր հետո:

Գրված տարածքի հյուսիսային մասում հանդիպում է ***կարմրարխածի սուզահավը*** (*Gavia stellata*): Ավելի փոքր և բնադրող չվող տեսակ է, մեջքը մոխրագույն գորշ է՝ մանր սպիտակ բծերով: Ջրից համեմատաբար թեթև է թռչում: Բնադրում է առանձին զույգերով, նույնիսկ ձկնազուրկ լճակների մոտ: Սնվելու համար թռչում են հարևան լճերը՝ հաճախ մինչև 10 կմ հեռավորության վրա գտնվող:

➢ ***Պատահական չվահյուր է:***

ՄԵԾ ՍՈՒԶԱԿ
Podiceps cristatus



Ընտանի բադերից բավական փոքր է: Մեջքը դեղնագորշ է, պարանոցն ու փորիկը՝ սպիտակ: Գլխին կան սև փետուրներ՝ եղջյուրիկների տեսքով, իսկ կողքերին՝ շիկակարմիր «օձիք»:

➢ ***Նստակյաց և տարածված տեսակ է***:

➢ ***Ապրելավայրը*** եղեգնի ու շաքարեղեգնի մացառուտներով լճերն են՝ բաց տարածքներով, նաև գետերի ափերը:

➢ ***Սնվում է*** մանր ձկներով, երկկենցաղներով, միջատներով, փափկամարմիններով: Սնվելիս հաճախ սուզվում է և երկար ժամանակ մնում ջրի տակ: Թռչում է թափավազքից: Թռիչքն արագ է՝ թևերի հաճախակի թափահարումներով և դեպի ետ ուղղված ոտքերով: Ջրի վրա է իջնում ծանր ճողփյունով: Ցամաքում տեղաշարժվում է դժվարությամբ՝ մարմինը ուղղահայաց պահելով: Բնադրման տարածքի գրավման ժամանակ ցուցադրում է ակտիվ հարսանեկան խաղեր:

Բնադրում է միայնակ, երբեմն՝ գաղութներով: Բույնը կառուցում է ցողուններից և ջրային բույսերից, հենվում է հատա-կին կամ լողում ջրում: Մայիսին դնում է 3-4 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են 27-29 օր: Ճուտիկները բնախույս են, ձվից դուրս գալուց անմիջապես հետո լավ լողում են, սակայն մինչև 3 շաբաթ տաքանում են ծնողների մեջքին, իսկ ինքնուրույն սնվում են 2,5 ամսից ոչ շուտ:



Մեծ սուզակի զույգը բնի մոտ





Հարսանեկան վարքի տարրեր

Մեծ սուզակի թաթը. յուրաքանչյուր մատը եզերազարդված է լողաթաղանթով

ՄՈԽՐԱԱՅՏ ՍՈՒԶԱԿ

Podiceps griseigena



Մեծ սուզակից փոքր է: Գլխի վերևը և ոչ մեծ փուփուլը սև են: Կոկորդը և այտերը մոխրագույն են: Պարանոցը և կրծքի վերևը շագանակագույն-շիկակարմիր են: Մարմնի վերևը սև-գորշագույն է, ներքևը՝ սպիտակ:

- ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** մացառուտներով, փոքր, կանգնած լճերն են:
- ***Սնվում է*** անողնաշար կենդանիներով, ջրիմուռներով, մանր ձկներով, գորտերով:



Զգույշ և պակաս նկատելի թռչուն է: Լավ լողում է և սուզվում, թռչում է վատ և «առանց ցանկության»: Մոնոգամ տեսակ է: Զույգի ձևավորման սկզբում ցուցադրում է հարսանեկան խաղերի իր լայն «հավաքածուն»: Բույնը մացառուտներում է՝ կոնաձև, ջրի մեջ ընկղմված և մինչև հատակը հասնող: Ապրիլ-մայիսին դնում է 2-6 ձու: Զվից դուրս գալուց հետո առաջին շաբաթվա ընթացքում ճուտիկները նստում են ծնողների մեջքին կամ թաքնվում փետուրների տակ՝ նույնիսկ ծնողի սուզվելու ժամանակ: Ինքնուրույն սկսում են սնվել 1 ամսականից: Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:



ԿԱՐՄՐԱՎԻԶ ՍՈՒԶԱԿ
Podiceps auritus

Աղավնուց փոքր է: Գլխի կողքերին կան դեղնակարմիր-շիկակարմիր փետուրներ: «Օձիքն» ու փուփուլը սև են: Կտուցն ուղիղ է: Պարանոցը առջևից, կրծքի վերևը և կողքերը շիկակարմիր են: Մեջքը գորշագույն է, մարմնի ներքևը՝ սպիտակ: Թռչում է շատ հանգիստ և արագ: Բույնը լողացող է՝ ափամերձ մացառուտներում կամ ծանծաղուտներում՝ հենվելով հատակին: Մայիսին դնում է 4-5 ձու, թխսում՝ 22-25 օր: Ճուտիկներին ծնողները կերակրում են 1,5 ամիս:

ՍԵՎԱՎԻԶ ՍՈՒԶԱԿ
Podiceps nigricollis

Կարմրավիզ սուզակից փոքր է: Գլխի կողքերը զարդարում են դեղնաշիկակարմիր փետուրները, գագաթին կա ոչ մեծ փուփուլ: Կտուցը թեթևակի դեպի վեր է ուղղված: Գլուխն ու պարանոցը սև են, մեջքը գորշագույն-սև, փորիկը՝ սպիտակ: Բնադրում է գաղութներով՝ 4-400 զույգերով, որպես կանոն, որորների կամ ջրածիծառների գաղութներում: Բույնը լողացող է: Մայիս-հունիսին դնում է 3-4 ձու, թխսում՝ 20-25 օր: Ծնողները, ճուտիկները մեջքին, անմիջապես լքում են բնադրման տարածքը: Ճուտիկներին կերակրում են մինչև 3 շաբաթ:

ՍՊԻՏԱԿ ԱՐԱԳԻԼ

Ciconia ciconia

Փետրավորումը սպիտակ է, բացի թափափետուրներից, որոնք սև են:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գրված տարածքի արևմտյան մասն է, նաև բաց տարածքները՝ ջրավազաններով, կուլտուրական լանդշաֆտները:
- ***Սնվում է*** գորտերով, կրծողներով, օձերով, ձկներով, միջատներով:

Թռիչքը հանգիստ է՝ խորը թափահարումներով և հաճախակի սավառնումով: Բույնը կառուցում է ծառերի գագաթներին, տանիքներին և օգտագործում տարիներ շարունակ: Ապրիլ-մայիսին դնում է 3-5 ձու, թխսում 33-34 օր: Ճուտիկները սկսում են թռչել 58-64 օր հետո:

ՍԵՎ ԱՐԱԳԻԼ

Ciconia nigra



Փետրավորումը սև է, բացի սպիտակ փորից:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** անտառապատ տարածքներն են՝ գետերով և ճահիճներով:
- ***Սնվում է*** գորտերով, կրծողներով, օձերով, ձկներով, միջատներով:

Շատ զգույշ թռչուն է և խուսափում է մարդու հետ հանդիպումներից: Տարիներ շարունակ օգտագործվող բույնը կառուցում է բարձր ծառերի գագաթներին կամ ժայռերի վրա: Բազմացման շրջանը սկսվում է ապրիլի կեսերից: Դնում է 3-5 ձու, թխսում մոտ 5 շաբաթ: Ճուտիկները սկսում են թռչել 9-10 շաբաթ հետո:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:



Սպիտակ արագիլ.
ձախից՝ ոտնահետքերը

Սև արագիլ.
ձախից՝ աջ ոտքի դրոշմը

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՏԱՌԵՂ

Ardea cinerea



Մեջքը թխակապույտ-մոխրագույն է, պարանոցը՝ սպիտակա-մոխրագույն՝ սև փետուրների երեք շարքով: Առաջնային թափ-փետուրները, հոնքը և փետրափնջիկը սև են: Կրծքին կան երկար, սպիտակ փետուրներ:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գետերի, լճերի, ջրամբարների ափերն են:
- ***Սնվում է*** ձկներով, միջատներով, գորտերով, օձերով, կրծողներ-ով, խեցգետիններով:

Թռիչքն ուժեղ է և հավասար՝ փետուրների համաչափ թափե-րով, ձգված ոտքերով և S-անման ծալված վզով: Սնվում է թափա-ռելով ծանծաղուտներում: Բնադրում է գաղութներով: Մոնոգամ տեսակ է: Մեծ բույնը կառուցում է 15-40 մ բարձրության վրա՝ ծա-ռերի ճյուղերին, գագաթներին: Ապրիլ-մայիսին դնում է 4-6 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են 25-28 օր: Ճուտիկները ձվից դուրս են գալիս աղվամազով, աչքերը բաց, սակայն միանգամայն անօգ-նական են և ոտքերի վրա կարողանում են կանգնել 2 շաբաթ հե-տո: Սկսում են թռչել 50-55 օր հետո՝ ճուտիկներով կամ երամով: Ձմեռելու են թռչում սեպտեմբերին:



Միջին մատի ճանկը՝ սանրի-կով, որի օգնությամբ թռչունը փետուրների վրա է տարածում փոշին:





Ձախ ոտքի դրոշմը

ՄԵԾ ԶՐՅՈՒԼ

Botaurus stellaris

Ագռավնուց խոշոր է: Մեջքը շիկակարմիր-գորշ է: Մարմնի ներքևը դեղնավուն է՝ լայնակի նախշերով: Կոկորդը սպիտակավուն է՝ ժանգագույն շերտագծով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Սպրեվավայրը*** լճերի, գետերի, ջրամբարների ճահճակալած, խիտ մացառուտներով ափերն են:
- ***Սնվում է*** ձկներով, գորտերով, շերեփուկներով, անողնաշար կենդանիներով:

Վարում է թաքուն, մթնշաղագիշերային կենսակերպ: Ծանր է թռչում, բայց թռիչքը թեթև է: Կտղուցականչը գիշերային դղրդալի թրխկոց է: Բույնը գետնի վրա է՝ խիտ մացառուտներում: Մայիսին դնում է 3-5 ձու, թխսում՝ 25-26 օր: Ճուտիկները բույնը լքում են 15-20 օր հետո: Թռչում են 2 ամիս անց:

ՓՈՔՐ ԶՐՅՈՒԼ

Ixobrichus minutus

Աղավնու մեծության է: Գագաթը և մեջքը սև են: Պարանոցը, կուրծքը և փորիկը դեղնավուն-դեղնակարմիր են: Թևերը վարդագույն են՝ սև պտերով: Էգի մեջքը գորշագույն է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Սպրեվավայրը*** լճերի, գետերի, ջրամբարների մացառուտներն են:
- ***Սնվում է*** մանր ձկներով, գորտերով, անողնաշար կենդանիներով, ձվերով և ճուտիկներով:

Ակտիվ է մթնշաղին, գիշերը: Հեշտորեն մագլցում է ճյուղերի և բների վրայով: Թռչում է արագ ու ճարպկորեն: Բույնը կառուցում է թփուտներում՝ կոտրելով եղեգնը: Մայիսին դնում է 5-9 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են 17-19 օր: Ճուտիկները լքում են բույնը 17-18 օր հետո:

Ջրցուլը հանգիստ վիճակում

Վտանգի դեպքում թաքնվում է՝ սեղմելով փետուրները և ձգելով մարմինը:

Ջրցուլը բնի մոտ





Փետրազուրկ ճուտիկները հեշտությամբ մագլցում են՝ կառչելով ճյուղերից: Վտանգի դեպքում լքում են բույնը, վազվզում այս ու այն կողմ և թաքնվում:

ՃՉԱՆ ԿԱՐԱՊ
Cygnus cygnus

Զգալիորեն մեծ է բադից: Փետրավորումը սպիտակ է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գրված տարածքի հյուսիսային մասն է՝ խիտ մացառուտներով պատված լճերը:
- ***Սնվում է*** ջրային բույսերով, անողնաշար կենդանիներով: Սընվելիս ջրի մեջ է ընկղմում գլուխն ու վիզը: Թռչում է թափավազքից: Դնում է 5-7 ձու, թխսում՝ մոտ 5 շաբաթ: Ճուտիկները բնախույս են: Գետերի և լճերի վրա թռչում են երամներով:

Գրանցված է ՀՀ **«*Կարմիր գրքում*»:**

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՍԱԳ
Anser anser



Տնային սագի մեծության է: Փետրածածկը բաց մոխրագույն է:

- ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գրված տարածքի հյուսիսային մասն է՝ խիտ մացառուտներով պատված լճերը, ճահիճները:
- ***Սնվում է*** ընձյուղներով, սերմերով, բույսերի սոխուկներով:

Շատ զգույշ է: Դնում է 4-6 ձու, թխսում՝ 4 շաբաթ: Փետրափոխության ժամանակ չի կարողանում թռչել: Չուի ընթացքում երամը սնվում է դաշտերում և մարգագետիններում: Հանդիպում են նաև սագերի ***սպիտակաճակատ*** (*A.albifrons*), ***ծվվան*** (*A.erythropus*) տեսակները:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

Կարապների երամ



Կարապները սնվելիս



Բադերի երամ



Մոխրագույն բադ

Սագերի գլուխներ (վերևից ներքև***). Մոխրագույն, սպի-տակաճակատ, ծվծվան***

ԿՈՒՆՉԱՆ ԲԱԴ
Anas platyrhynchos

Տնային բադի մեծության է: Արուի գլուխը սև է՝ կանաչավուն փայլով, վզին՝ սպիտակ օղակ, կուրծքը շագանակագույն է, մնացած փետուրները գորշ են, ներքևից՝ սպիտակ: Լրիվ փետրափոխությունից հետո նման է էգին: Էգը գորշագույն-շիկակարմիր է, մուգ խայտաբղետ:



- ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** մացառուտներով պատված լճերը, չորացող ճահիճներն են:
- ***Մնվում է*** ջրային բույսերով, անողնաշար կենդանիներով:

Լավ լողում և սուզվում է, բայց սնվում է ծանծաղուտում գլխիվայր: Թռչում է գրեթե ուղղահայց: Մոնոգամ տեսակ է: Գարնանն արուներն արձակում են կտղուցականչեր՝ ընդունելով բնորոշ կեցվածք, իսկ մայիսի վերջին թռչում են դժվարամատչելի ջրավազաններ՝ փետրափոխության, որի ընթացքում մի քանի շաբաթով կորցնում են թռչելու ունակությունը: Դնում են 7-16 ձու, թխսում է էգը՝ 22-28 օր: 8 շաբաթ հետո ճուտիկներն արդեն կարողանում են թռչել, իսկ էգերի մոտ սկսվում է լրիվ փետրափոխությունը: Չվում են աշնանը, մինչև նոյեմբեր ամիսը: Երամի ձևը թեք գծի նման է: Երբեմն ձմեռում են չսառչող ջրավազանների վրա:





Թռիչքի ժամանակ նկատելի է «հայելին»՝ կապտամանուշակագույն թափափետուրները:



Բույնը՝ գետնի վրա, հազվադեպ՝ փչակում



Ճուտիկներն իսկական բնախույս են. ձվից դուրս գալուց հետո՝ չորանալով անմիջապես սկսում են լողալ և սնվել:

ՍՈՒԼՈՂ ՄՐՏԻՄՆ

Anas crecca

Ամենափոքր բադն է: Արուի գլուխը շագանակագույն է՝ կանաչ շերտով, կուրծքը՝ շիկակարմիր, խայտաբղետ, կողքերը՝ մոխրագույն: Էգը գորշ է՝ շիկակարմիր բծերով:

- ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գետերը, լճերը, ճահիճներն են:
- ***Սնվում է*** բույսերով, անողնաշար կենդանիներով:

Թռիչքն անձայն է, շատ արագ և հմտորեն: Մայիսին դնում է 8-10 ձու, էգը թխսում է 21-23 օր: Ճուտիկները բնախույս են, սկսում են թռչել 2 ամիս հետո:

ՃՔՃՔԱՆ ՄՐՏԻՄՆ

Anas querquedula

Արուի գլուխը շագանակագույն է՝ սպիտակ շերտով, մեջքն ու կուրծքը՝ գորշ, փորիկը՝ սպիտակ, կողքերն ու թևերը՝ մոխրագույն:

- ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ոչ մեծ ջրավազանների մացառուտներն են:
- ***Սնվում է*** բույսերով, փափկամարմիններով, խեցգետնակերպերով:

Թռիչքն արագ է և ուժեղ: Կտղուցականչի ժամանակ արուն ընդունում է տարբեր կեցվածքներ, թռչկոտելով արձակում տարբեր ձայներ: Մայիսին դնում է 8-11 ձու, թխսում է էգը՝ 21-23 օր: 7-8 շաբաթ հետո ճուտիկները սկսում են թռչել:



Ճրճքան մրտիմն. կանաչասև, մետաղական փայլով «հայելին»



Ճրճքան մրտիմն. մոխրագույն-սև, մետաղական փայլով «հայելին»

ԼԱՅՆԱԿՏՈՒՑ ԲԱԴ
Anas clipeata





Նկատելիորեն փոքր է կոնչան բադից: Մուգ կտուցը շատ երկար ու լայն է: Թևի ծածկող փետուրները կապտավուն են: Արուի գլուխը մուգ է՝ կանաչ փայլով, կուրծքը՝ սպիտակ, կողքերն ու փորը՝ շագանակագույն: Էգը գորշ է՝ պտերով:

ՆԵՏԱՊՈՂ ԲԱԴ
Anas acuta





Կոնչան բադից մի քիչ փոքր է: Արուի գլուխը մուգ շագանակագույն է, պարանոցն ու մարմնի ներքևը՝ սպիտակ, մոխրագույն մեջքին և կողքերին՝ մուգ շերտագծեր, ներքնապոչը՝ սև, «հայելին»՝ կանաչամանուշակագույն, պոչը՝ երկար, բարակ և սուր: Էգը գորշավուն է՝ պտերով, «հայելին» շիկակարմիր է, առանց փայլի:

Երկու տեսակն էլ ***չվահյուր են***:

ՇՀԱՆ ԲԱԴ

Anas penelope



Կոնչան բադից բավական փոքր է: Արուի գլուխը շագանակագույն է, ճակատը՝ դեղին, կուրծքը՝ վարդագույն, մեջքն ու կողքերը՝ մոխրագույն, փորը՝ սպիտակ, «հայելին»՝ կանաչ: Էգը գորշ շագանակագույն է՝ մանր, մուգ պտերով գլխով և սպիտակ փորով:

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ԲԱԴ

Anas strepera



Բավական փոքր է կոնչան բադից: Արուի գլուխը գորշ է, պարանոցը՝ վառ գորշագույն, մուգ պտերով, կուրծքն ու կողքերը՝ մոխրագույն, մուգ պտերով, վերնապոչն ու ներքնապոչը՝ սև, փորիկը՝ սպիտակ, պոչը՝ ընդգծված մոխրագույն: Ծածկափետուրները շագանակագույն են, «հայելին»՝ սև-սպիտակ: Էգը գորշ է՝ մուգ պտերով:

ՍՈՆԱԲԱԴ
Bucephala clangula



Կոնչան բադից փոքր է: «Հայելին» սպիտակ է ու մեծ: Արուի գլուխը սև է՝ կանաչ փայլով, մեջքը, վերնապոչը, պոչը և առաջնային թափափետուրները սև են, մնացած փետրավորումը և այտի վրա եղած բծերը՝ սպիտակ: Էգը մոխրագույն է, գլուխը՝ շագանակագույն, պարանոցի և փորիկի վրա եղած շերտը՝ սպիտակ:

- ***Պատահական չվահյուր*** տեսակ է:
- ***Այրելավայրը*** անտառային գետերն ու լճերն են:
- ***Մնվում է*** փափկամարմիններով, ձկներով, միջատներով, փոքր խեցգետիններով:



Ջրի վրա վայրէջքի ժամանակ պոչն իջեցնում է: Թռչում է հմտորեն, արագ, թևերի թափահարման ժամանակ լսվում է զրնգուն սուլոց:

Իր բնադրավայրում փչակներում ապրիլ-մայիսին դնում է 6-12 ձու: Էգը թխսում է մինչև 30 օր: Ճուտիկները ձվից դուրս գալուց 1-2 օր հետո լքում են փչակը: Էգը 2-3 ամիս շարունակում է մնալ սերնդի հետ: 8 շաբաթ հետո ճուտիկները սկսում են թռչել:

ՓՈՒՓՈՒԼԱՎՈՐ ՍՈՒՋԱԲԱԴ
Aythya fuligula





Կոնչան բադից բավական փոքր է: Արուի կողքերը սպիտակ են, փորը, «հայելին» և մնացած փետրավորումը՝ սև՝ բոսորագույն-մանուշակագույն փայլով: Փուփուլը երկար է: Էգը մուգ գորշ է՝ առանց փայլի, իսկ փուփուլը՝ կարճ:

ԿԱՐՄՐԱԳԼՈՒԽ ՍՈՒՋԱԲԱԴ
Aythya ferina





Կոնչան բադից բավական փոքր է: Արուի գլուխն ու պարանոցը կարմրաշագանակագույն է, կուրծքն ու վերնապոչը՝ սև, մնացած փետրավորումը՝ մոխրագույն-երկնագույն: «Հայելի» չունի: Էգը ժանգագույն-գորշ է՝ դժգույն բծերով ու սև կետերով:

ՄԵԾ ՍՂՈՑԱԿՏՈՒՑ ԲԱԴ
Mergus merganser



Խոշոր բադ է: Կտուցը նեղ է՝ ծայրին կեռիկ, իսկ եզրերին՝ ատամիկներ: Արուի գլուխը և մեջքը սև են, փորիկն ու կողքերը՝ կաթնավուն սպիտակ: Էգի գլուխը շիկակարմիր-շագանակագույն է, մարմինը՝ մոխրագույն, կոկորդն ու փորը՝ սպիտակ:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Սպրեավայրը*** ձկներով հարուստ գետերի ու լճերի ափերն են:
- ***Սնվում է*** փափկամարմիններով, մանր ձկներով, միջատներով: Կերը հայթայթում է սուզվելով:

Թռչում է թափավազքից, աղմուկով: Թռիչքն արագ է, լարված՝ թևերի սուլոցով:



Բնադրում է փչակներում, քարերի արանքներում: Մայիսին դնում է 7-12 ձու: Էգը թխսում է մոտ 4 շաբաթ: Հաճախ մի քանի սերունդների ճուտիկները միավորվում են մեկ երամում: Ճուտիկներն արագ վազում են ջրի վրայով՝ թրխկացնելով թևերով:

ՍՂՈՑԱԿՏՈՒՑ ԲԱԴ
Mergus serrator





Կոնչան բադի չափ է: Արուի գլուխն ու մեջքը սև են, փուփուլը՝ երկար, կուրծքը՝ գորշ է՝ մուգ պտերով: Փորիկը սպիտակ է:

Էգը մոխրագույն է՝ գորշ գլխով և բաց գույնի փորիկով:

ԼՈՒՏՈՎ
Mergus albellus





Կոնչան բադից բավական փոքր է: Փուփուլը կարճ է: Արուն սպիտակ է՝ սև մեջքով և ծոծրակի ու աչքերի շուրջը սև բծերով: Էգը մոխրագույն է՝ շագանակագույն գլխով, բաց գույնի այտերով և փորիկով:

ԱՐԾԻՎՆԵՐ ԵՎ ԵՆԹԱՐԾԻՎՆԵՐ

Aquila sp.

Քարարծիվ
Aquila chrysaetos

Մոխրագույն ագռավ

Մեծ ենթարծիվ
Aquila clanga

Քարարծվի փետրավորումը մուգ գորշ է: Երիտասարդ թռչունների պոչի վրա կա լայն մուգ շերտ: ***Մեծ ենթարծիվը*** մուգ գորշ է՝ երբեմն բաց գույնի բծերով:

- ***նստակյաց և քոչվոր տեսակ*** է, ենթարծիվը՝ ***չվող***:
- ***ապրելավայրը*** գետերի հովիտներով, ճահիճներով անտառներն են:
- ***սնվում են*** կրծողներով, թռչուններով, գորտերով: Թռիչքը ուժեղ է, վստահ՝ թևերի հազվադեպ թափահարումներով և հաճախակի սավառնումով: Հազվագյուտ և զգույշ թռչուններ են: Թվաքանակը նվազում է: Պահպանվում են ամենուրեք:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՍՊԻՏԱԿԱՊՈՉ ԱՐԾԻՎ
Haliaeetus albicilla



Երիտասարդ թռչնի պոչը

Փետրավորումը գորշ է, գլուխն ու մարմնի ներքևը՝ մի փոքր ավելի բաց գույնի: Պոչը սեպաձև է, սպիտակ: Կտուցը զանգվածեղ է, դեղին ու փքված: Երիտասարդ թռչունների կտուցն ու պոչը մուգ գույնի են:

- ***Հազվագյուտ չվահյուր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գետերի հովիտներն են, մեծ լճերի ափերը:
- ***Սնվում է*** ձկներով, թռչուններով, կրծողներով, լեշով:

Թռիչքն ավելի ծանր է, քան արծիվներինը, սավառնում է հազվադեպ: Որս է կատարում՝ ոչ մեծ բարձրությունից հետևելով կամ դարանակալելով զոհին: Շատ զգույշ է: Տարիների ընթացքում զանգվածեղ բույն է կառուցում բարձր ծառերի գագաթներին: Մարտ-ապրիլին դնում է 2-3 ձու: Հիմնականում թխում է էգը՝ մոտ 6 շաբաթ: 10 շաբաթ հետո ճտերը կարողանում են թռչել:

Թվաքանակը նվազում է: Պահպանվում են ամենուրեք:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՃՈՒՌԱԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

Buteo buteo



Ագռավից նկատելիորեն մեծ է: Փետրավորման ընդհանուր երանգը մուգ գորշ է, փորիկն ավելի բաց գույնի՝ է խայտաբղետ պտերով: Պոչին նկատելի են շերտեր: Թռիչքի ժամանակ ներքևից երևում են բաց գույնի բծերը:



- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** անտառներն են, որոնք հաջորդում են մարգագետիններին, դաշտերին, բացատներին:
- ***Սնվում է*** կրծողներով, թռչուններով, միջատներով:

Թռիչքը հանգիստ է՝ ոչ հաճախակի թափերով, երկար ժամանակ սավառնում է: Հետևում է զոհին, երբեմն «կախվում» է տեղում՝ թևերի հաճախակի թափահարումներով:

Մոնոգամ տեսակ է: Բնադրում է տարբեր զույգերով: Ապրիլ-մայիսին դնում է 2-3 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են: Ճուտիկները ձվերից դուրս են գալիս 34-38 օր հետո, կերակրվում են 6-7 շաբաթ:

ԹԱՎՇԱՌՏ ՃՈՒՌԱԿ

Buteo lagopus



Ավելի բաց գույնի է ներքևից՝ սև փորիկով, թևերի վրա բծերով, պոչի վրա շերտով: ***Զմեռող*** տեսակ է:

ՕՁԱԿԵՐ ԱՐԾԻՎ

Circaetus gallicus

Խոշոր է, ներքևից շատ բաց գույնի է՝ մուգ կտնառքով և պտերով: Խիստ հազվագյուտ, ***բնադրող և չվող*** տեսակ է: Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ԿՐԵՏԱԿԵՐ

Pernis apivorus

Մարմինը վերևից գորշ է, ներքևից՝ մուգ բծերով, որոնք երբեմն լրիվ ծածկում են սպիտակ ֆոնը:

Պոչի վրա կան երեք լայն ու սև շերտեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է: Թռիչքը թեթև է և խուսավարելով:
- ***Մնվում է*** միջատներով, իշամեղուների և կրետների թրթուրներով: Մայիս-հունիսին դնում է 1-2 ձու, թխսում է 34-38 օր:

ՄԵՎ ՑԻՆ

Milvus migrans



Ագռավից խոշոր է: Մարմնի վերևը մուգ է՝ շագանակագույն գորշ, ներքևը՝ շիկակարմիր պտերով: Պոչը նկատելի կտրվածքով է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** գետերի հովիտները, լճերի ափերը, կուլտուրական լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** լեշով, մսի մնացորդներով, կրծողներով, գորտերով, քնաթմբիր ձկներով, երբեմն մանր թռչուններով:

Թռիչքը թեթև է, երկար ժամանակ սավառնում է: Կանչը բարձր է, ձգվող, զրնգուն: Մոնոգամ տեսակ է: Բնադրում է միայնակ կամ փոքր երամով: Բույնը կառուցում է բարձր ծառերի վրա, հազվադեպ՝ զառիթափ թեքությունների:

Ապրիլ-մայիսին դնում է 2-3 ձու: Հիմնականում 30-32 օր թխսում է էգը: Ճուտիկները լքում են բույնը 6 շաբաթ անց:

ՋՐԱՐԾԻՎ

Pandion haliaetus



Բավական մեծ է ագռավից: Մարմնի վերևը շատ մուգ է՝ սևավուն, ներքևը՝ սպիտակ, կրծքի վերին մասի վրա գորշ պտերով: Թևերի ծալքերին կան սև բծեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** պարզ ջրերով, ձկներով հարուստ խոշոր ջրավազաններն են:
- ***Սնվում է*** մինչև 3 կիլոգրամանոց ձկներով:

Ջրավազանի վրա թռչում է դանդաղ, ոչ մեծ բարձրության վրա: Նկատելով ձկանը՝ քարանում է: Թրթռացնելով թևերով՝ ջուրն է նետվում մի քանի մետր բարձրությունից: Ձկան հետ ծանր է թռչում՝ թևերի խորը թափերով:

Բույնը, որը կառուցում է բարձր ծառերի չոր գագաթներին՝ ջրից ոչ հեռու, օգտագործում է տարիներ շարունակ: Ապրիլ-մայիսին դնում է 2-3 ձու, որոնց վրա մոտ 5 շաբաթ թխսում է էգը: Ճուտիկները կարողանում են թռչել 8 շաբաթ հետո: Թվաքանակն ամենուրեք կրճատվում է:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՃԱՀՃԱՅԻՆ ՄԿՆԱՃՈՒՌԱԿ

Circus aeruginosus

Ագռավից խոշոր է: Արուի մարմնի վերևի փետրավորումը շագանակագույն-գորշ է, ներքևը՝ շիկակարմիր, պտերով: Պոչն ու թևերը մոխրագույն են: Թևերի ծայրերը մուգ գույնի են: Էգը մուգ գորշ է, գլխի վերևը՝ բաց գույնի, կոկորդը՝ սպիտակ:

➢ ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:

➢ ***Ապրելավայրը*** ճահիճները, ջրավազանների բուսակալված ափերն են:

➢ ***Սնվում է*** կրծողներով, թռչուններով, ձվերով:



Նրբագեղ երկարաթև գիշատիչ է: Թռիչքը սահուն է գետնից ոչ բարձր և զոհի վրա կտրուկ, սրընթաց հարձակումներով:

Բնադրում է առանձին զույգերով: Բույնը մացառուտներում է, գետնի կամ եղեգնի կտորտանքի վրա: Ապրիլ-մայիսին դնում է 4-5 ձու: Էգը թխսում է 30-35 օր, ճուտիկներին կերակրում 8-9 շաբաթ:

ԴԱՇՏԱՅԻՆ ՄԿՆԱՃՈՒՌԱԿ

Circus cyaneus



Արուի մարմինը մոխրագույն է, միայն փորիկը և վերնապոչը՝ սպիտակ: Էգի մարմնի վերևը գորշ է, ներքևը՝ շիկակարմիր, պտերով, վերնապոչը՝ սպիտակ: Բույնը գետնի վրա է:

- ***Չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց տարածքներն են:
- ***Սնվում է*** կրծողներով, թռչուններով, մողեսներով, միջատներով:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՄԿՆԱՃՈՒՌԱԿ

Circus pygargus

Արուն մոխրագույն-թխակապույտ է, փորիկին՝ շիկակարմիր, երկայնակի պուտեր: Էգը դաշտային մկնաճուռակի նման է:

- ***Չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** խոնավ մարգագետիններն են, գետերի հովիտները:
- ***Սնվում է*** կրծողներով, թռչուններով, միջատներով:

Բույնը գետնի վրա է, բարձր խոտերի մեջ, ջրին մոտ:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ԼՈՐԱՃՈՒՌԱԿ
Accipiter nisus

Աղավնուց փոքր է: Մարմնի վերևը մուգ կապարագույն է, ներքևը՝ շիկակարմիր, երկայնակի մուգ բրոնզագույն շերտերով: Էգը մի քիչ մեծ է արուից:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** անտառներն են՝ բացատներով, հովիտներով, անտառահատատեղերով:
- ***Սնվում է*** թռչուններով, հազվադեպ՝ կրծողներով:

Թռիչքը թեթև է, արագ, ճարպիկ: Բույնը ծառի վրա է: Ամեն տարի նորն է պատրաստում: Հունիսին դնում է 4-5 ձու: Ճուտիկները սկսում են թռչել 4-րդ շաբաթում:

ՑԱԽԱՔԼՈՐԱՌՐՍ
Accipiter gentilis

Ագռավից երկու անգամ խոշոր է: Մարմնի վերևը թխակապույտ, գորշ-մոխրագույն է, ներքևը՝ բաց մոխրագույն, լայնակի հաճախակի շերտերով:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր տիպի անտառներն են:
- ***Սնվում է*** թռչուններով, կրծողներով, նապաստակներով:

Թռիչքն ուժեղ է, խուսավարումներով: Զոհին դարանակալում է և ճարպկորեն ու ակտիվ հետևում:

Զույգը բնադրում է միայնակ: Բույնը կառուցում է բարձր ծառերին: Հաճախ զբաղեցնում է այլ թռչունների բները: Ապրիլ-մայիսին դնում է 3-4 ձու: Հիմնականում 36-38 օր թխսում է էգը: Ճուտիկներին կերակրում է 7 շաբաթ: Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:



Լորաճուռակ





Յախաքլորառոս. աջից երիտասարդ թռչունն է. կրծքին և փորին երկայնակի պուտերով:

ՍԱՊՍԱՆ

Falco peregrinus



Աղավնուց խոշոր է: Մարմնի վերևը սև թերթաքարագույն-մոխրագույն է, ներքևը՝ բաց գույնի, լայնակի բծերով: Այտերին մուգ «բեղեր» են:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ոչ մեծ անտառներով տարածքներն են:
- ***Սնվում է*** տարբեր թռչուններով:

Թռիչքն ուժեղ է, վստահ: Որս կատարելիս թռչուններին հարվածում է վերևից՝ ուղղահայց և դիպուկ հարվածով:



Բույնը ժայռերի, ծառերի վրա է, օգտագործում է նաև օտար բները: Ապրիլ- մայիսին դնում է 3-4 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են 28-29 օր: Ճուտիկները սկսում են թռչել 5-6 շաբաթ հետո: Ամենուրեք հազվագյուտ թռչուն է և պահպանության կարիք ունի:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ԱՂԱՎՆԱԲԱԶԵ

Falco columbarius



Աղավնուց մի քիչ փոքր է: Արուի մարմնի վերևը մոխրագույն-թխակապույտ է, ներքևը՝ շիկակարմիր պտերով: Էգը գորշ-դեղնավուն է:

- ***Չվող և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց տարածքներն են:
- ***Մնվում է*** թռչուններով՝ գետնից ոչ բարձր, անակնկալ թռիչքներով: Գրանցված է ՀՀ ***«Կարմիր գրքում»:***

ԿԱՐՄՐԱՌՏ ԲԱԶԵ

Falco vespertinus

Աղավնու համեմատությամբ ավելի նրբակազմ և բարակիրան է: Արուն սև թերթաքարագույն է, ենթապոչ և «վարտիքը» վառ շիկակարմիր են: Էգի մեջքն ու թևերը մոխրագույն են, գլուխը, պարանոցը, փորիկը՝ շիկակարմիր:



- ***Չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց տարածքներն են:
- ***Մնվում է*** միջատներով և մանր կրծողներով: Հաճախ բնադրում է գաղութներով: Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀՈՂՄԱՎԱՐ ԲԱԶԵ
Falco tinnunculus

Աղավնուց փոքր է: Մարմնի վերևը կարմրագորշ է, ներքևը՝ դեղնակարմիր՝ բծերով, գլուխը՝ մոխրագույն: Էգը ժանգաշիկակարմիր է՝ լայնակի պտերով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ոչ մեծ անտառներով բաց տարածքներն են:
- ***Սնվում է*** կրծողներով, միջատներով:

Զոհին հետևում է օդից: Բույն է դնում փչակներում, օգտագործում է նաև այլ թռչունների հին բները:

Ապրիլ-մայիսին դնում է 4-6 ձու, թսխում՝ 28 օր: Ճուտիկները սկսում են թռչել 4 ամիս հետո:

ԱՐՏՈՒՅՏԱԲԱԶԵ
Falco subbuteo

Աղավնու չափ է: Մարմինը վերևից մոխրագույն է, կոկորդը՝ սպիտակ, ներքևից՝ բաց գույնի՝ պտերով: Ենթապոչը շիկակարմիր է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ոչ մեծ անտառներով բաց տարածքներն են:
- ***Սնվում է*** թռչուններով, միջատներով:

Օդային կատարյալ որսորդ է, զոհին բռնում է միայն թռիչքի ժամանակ: Բնադրում է այլ թռչունների հին բներում:

Հունիսին դնում է 3-4 ձու: Հիմնականում թխսում է էգը՝ մոտ 4 շաբաթ: Ճուտիկները սկսում են թռչել 4-5 շաբաթ հետո:





Հաճախ ***արտույտաբազեն*** (կանգնում) է օդում՝ թափահարելով թևերը



Արտույտաբազեն՝ որսի վրա հարձակման պահին

Արտույտաբազեի ճուտիկները սպասում են կեր բերող ծնողներին

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ԿԱՔԱՎ
Perdix perdix

Չափերով նման է աղավնուն: Մարմինը վերևից գորշ է՝ մուգ պտերով, ներքևից՝ մոխրագույն: Այտերը, կոկորդը և կողքերի շերտերը շիկակարմիր են: Արուները կրծքի վրա ունեն պայտանման շագանակագույն բիծ:

- ***Նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** մացառուտներով բաց տարածքներն են:
- ***Սնվում է*** միջատներով, սերմերով, ընձյուղներով:

Թռչում է միանգամից՝ դռդռոցով, արագ և ուղիղ: Մոնոգամ տեսակ է, ապրում է զույգերով: Բույնը գետնի վրա է, դաշտերի եզրերին, թփուտներում: Ապրիլ-մայիսին դնում է մինչև 20 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են 23-25 օր: Ճուտիկները բնախույս են, սկսում են թռչել 24-26 օր հետո:

Սոխրագույն կաքավի հետքերը







Հորի հետքը՝ բնական մեծության

Ընտանիք՝ **Կռունկներ** *Gruidae*

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ԿՌՈՒՆԿ

Grus grus

Խոշոր թռչուն է՝ մինչև 120 սմ բարձրությամբ, թևերի բացվածքը՝ մինչև 2,5 մ: Գունավորումը մոխրագույն է: Գլուխը, պարանոցը և թևերի ծայրերը սև են: Գլխի կողքերին սպիտակ շերտեր են, ծոծրակին՝ կարմիր բիծ:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ճահիճներն են:
- ***Սնվում է*** սերմերով, հատապտուղներով, անողնաշար կենդանիներով, գորտերով:



Թռիչքը ուղիղ է, համաչափ, երամը սեպի ձև ունի: Զգույշ, մոնոգամ թռչուն է: Զույգերը պահպանվում են տարիներ շարունակ: Բնադրումից առաջ բնորոշ են կտղուցականչի պարերը, դաշնաձայն դուետը՝ արուի և էգի համատեղ երգը:

Բույնը կառուցում է խոնավ վայրերում՝ տոփանելով պնդեցրած խոտից: Մայիս-հունիսին դնում է 2 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են մոտ 1 ամիս: Ճուտիկները բնախույս են, սկսում են թռչել 9-10 շաբաթ հետո:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՃԱՀՃԱՀՈՎՎԻԿՆԵՐ

Porzana sp.

Սարյակի չափ թռչուններ են: Մարմինը առջևից ձիթապտղագույն-գորշ է՝ բաց և մուգ գույնի պուտերով, իսկ ներքևից՝ մոխրագույն-երկնագույն, կողքերին՝ մուգ և սպիտակ շերտեր:

- ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** լճերի, գետերի բուսակալած ափերն են, ճահիճները, խոնավ մարգագետինները:
- ***Սնվում է*** միջատներով, որդերով, փափկամարմիններով, սերմերով:

Թաքուն կյանք վարող թռչուններ են, ակտիվ են մթնշաղին, գիշերը: Ճարպկորեն մագլցում և վազում են մացառուտներում, հաճույքով լողում և սուզվում են: Առանձնապես հաճույքով չեն թռչում, բայց թռիչքն արագ է, թեթև:

Բնադրում են առանձին զույգերով: Գերադասում են բույնը կառուցել թաքուն տեղում՝ մացառուտներում հողաթմբին կամ ջրի վրա կախված ճյուղերին: Մայիսին դնում են 7-10 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 20-22 օր: Ճուտիկները բնախույս են:

Ձախից աջ. **գաճաճ ճահճահովվիկ** *Porzana pusilla*, **եվրոպական ճահճահովվիկ** P. *parva*, **մեծ ճահճահովվիկ** *P.porzana*:

ԵՂԵԳՆԱՀԱՎ
Gallinula chloropus



Աղավնու չափ է: Գլուխը, պարանոցը և կուրծքն անփայլ սև է, մեջքն ու թևերը կանաչավուն-գորշ են, ենթապոչը սպիտակ է, ճակատի կոշտուկը և կտուցը կարմիր են: Լավ վազում է, լողում ու սուզվում:

ՍԵՎ ՓԱՐՓԱՐ
Fulica atra



Ագռավի չափ է: Գունավորումը սև է, ճակատի կոշտուկը՝ սպիտակ: Լավ լողում է: Ջրից թռչում է թափավազքից: Մատների լողաթաղանթները ժաներիզավոր են: Ակտիվ է ցերեկը:

➢ ***Բնադրող և տարածված*** տեսակ է:

➢ ***Սնվում է*** բույսերով, անողնաշար կենդանիներով, հազվադեպ՝ մանր ձկներով:

ՋՐԱՀՈՎՎԻԿ
Rallus aquatikus



Սարյակից խոշոր է: Պարանոցն ու կուրծքը կապարագույն-մոխրագույն է, մեջքը՝ շագանակագույն, պտերով, կողքերին սև-սպիտակ շերտեր են:

➢ ***Չվող*** տեսակ է: Ակտիվ է գիշերը, թաքուն կյանք է վարում ջրերի մոտ: Բնադրում է ափերի մացառուտներում, ճահճոտ մարգագետիններում, դժվարամատչելի տեղերում:

ՄԱՐԳԱՀԱՎ
Crex crex

Սարյակից խոշոր է: Գունավորումը՝ շագանակագույն շիկակարմիր է՝ մանր մուգ բծերով:

➢ ***Չվող*** տեսակ է:

➢ ***Մնվում է*** միջատներով, սերմերով, որդերով:



Գաղտնի կյանք վարող ցամաքային թռչուն է: Ակտիվ է գիշերը: Արագ վազում է, առանձնապես հաճույքով չի թռչում: Բնադրում է խոնավ մարգագետիններում, դաշտերում, խիտ խոտածածկով բացատներում:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՐՈՐ
Larus ridibundus

ՓՈՔՐ ՈՐՈՐ
Larus minutus

- ***Բնադրող նստակյաց և չվող*** տեսակներ են:
- ***Ապրելավայրը*** գետերի, լճերի ափերն են:
- ***Սնվում են*** միջատներով, դրանց թրթուրներով, մանր ձկներով, խեցգետնակերպերով:

Թռիչքը թեթև է՝ խուսավարելով: Կերը հայթայթում են ջրի մակերեսին՝ թռիչքի ժամանակ կամ լողալով:

Բնադրում են գաղութներով: Ապրիլ-հունիսին դնում են 3 ձու, թխսում՝ 20-24 օր: Ճուտիկները սկսում են թռչել 1 ամսից:



Ձախից ***սովորական որորն*** է: Գլուխը սրճագույն է, թևերը վերևից՝ մոխրագույն, թափափետուրների ծայրերը՝ սև, մարմինը ներքևից, պարանոցը և պոչը՝ սպիտակ: Ագռավի չափ է:

Աջից ***փոքր որորն*** է: Գլուխը սև է, թևերի ծայրերը՝ սպիտակ, իսկ ներքևը՝ մուգ-կապարագույն: Աղավնու չափ է:

ԹԽԱԿԱՊՈՒՅՏ ՈՐՈՐ
Larus canus



Երիտասարդ թռչուն

Ագռավից քիչ մեծ է: Մեջքն ու թևերը բաց մոխրագույն են, թևերի ծայրերը՝ սև, մնացած փետրավորումը՝ սպիտակ: Երիտասարդ թռչունների գունավորումը մոխրագույն-գորշ է՝ պտերով:

- ***Պատահական չվահյուր*** է:
- ***Մնվում է*** անողնաշար կենդանիներով, ձկներով, թափոններով:
- ***Բնադրում է*** մենակ կամ գաղութով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐՈՐ
Larus armenicus

Աչքերը մուգ են, ոտքերը՝ դեղին, կտուցը՝ մուգ շերտով: Թռչելիս երևում են արտաքին թևի խոշոր սև հատվածը և առաջնային թափափետուրների առաջին փետուրի սպիտակ բիծը: Բնադրման շրջանում գլուխը, մարմինը ներքևից և պոչը սպիտակ են, վերևից՝ բաց մոխրագույն: Ոտքերը վառ նարնջագույն են, կտուցը՝ դեղին՝ ենթակտուցի ծայրին մոտ կարմիր պտով:

- ***Ապրելավայրը*** ջրին մոտ տարածքներն են:
- ***Մնվում է*** կենդանական և բուսական ծագման կերով:

Բույնը փոսիկ է քարերի և բույսերի մեջ հաճախ թփերով քողարկված: Դնում է 3 ձու:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ԳԵՏԱՅԻՆ ՋՐԱԾԻԾԱՌ
Sterna hirundo



Աղավնուց փոքր է: Գլուխը, պարանոցի ետևը և թևերի ծայրերը սև են, մեջքը, թևերը՝ մոխրագույն, մարմինը ներքևից՝ սպիտակ: Եզրային ղեկափետուրները շատ երկարացած են, եղանաձև:

➢ ***Չվող*** տեսակ է: Գաղութներով բնադրում է ավազային և գլաքարերով լողափերին: Մայիսին դնում է 3 ձու: Որսում է մանրաձկնիկներ, անողնաշար կենդանիներ՝ օդից նետվելով ջրի մեջ:





ՓՈՔՐ ՋՐԱԾԻԾԱՌ
Sterna albifrons

Սարյակի չափի է: Ճակատը, հոնքը և մարմինը ներքևից սպիտակ են, գլուխը՝ սև, թևերի ծայրերը՝ մուգ: Թռիչքը գեղեցիկ է՝ ճախրելով:

➢ ***Չվող*** տեսակ է: Ոչ մեծ գաղութներով կամ միայնակ բնադրում է գետերի, հազվադեպ լճերի, ավազուտային ափերին: Հիմնականում սնվում է մանրաձկնիկներով:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՍԵՎ ՋՐԱԾԻԾԱՌ
Chlidonias nigra





Աղավնուց փոքր է: Գլուխը, կուրծքը, փորիկը սև են, թևերը և պոչը՝ սև թերթաքարագույն-մոխրագույն է, թռիչքի ժամանակ երևում է թևի բաց մոխրագույն «աստառը»: Ենթապոչը սպիտակ է: Թռիչքն անհամաչափ է՝ դեպի առաջ նետումներով:

➢ ***Մնվում է*** անողնաշար կենդանիներով: Բնադրում է գաղութներով, լճերի, գետերի ափերին, կղզիներում, ճահիճներում՝ հաճախ այլ որորների և ջրածիծառների հետ: Բույնը լողացող ջրաբերուկների, եղեգնի կուտակների վրա է: Մայիս-հունիսին դնում է 3 ձու: Էգը թխսում է 14-17 օր, ճուտիկներին կերակրում մոտ 1 ամիս:

ՍՊԻՏԱԿԱԹԵՎ ՋՐԱԾԻԾԱՌ
Chlidonias leucoptera



Գլուխը, կուրծքը, մեջքը և թևի «աստառը» սև են, թևերի վերևը և պոչը՝ սպիտակ:

➢ ***Չվող*** տեսակ է: Բազմանում և սնվում է ինչպես ջրածիծառը:

ԱՆՏԱՌԱԿՏՑԱՐ
Scolopax rusticola

Աղավնու չափ է: Մարմնի վերևը շագանակագույն-շիկակարմիր է՝ մուգ և բաց պտերով մարմնի ներքև՝ մոխրագույն է:

- ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** հատումներով, խոնավ ձորակներով, ճահիճներով անտառներն են:
- ***Սնվում է*** որդերով, միջատների թրթուրներով:

Ակտիվ է մթնշաղին, գիշերը: Պոլիգամ տեսակ է: Թռիչքը խուսավարումներով է: Գարնանը կտղուցականչի թռիչքը մթնշաղին կատարվող որսն է՝ դանդաղ, բնորոշ կանչերով: Գետնին դնում է 4 ձու, որոնց վրա 20-21 օր թխսում է էգը: Կարող է տեղափոխել դեռևս չթռչող ճուտիկներին՝ դրանց սեղմելով-պահելով ոտքերով:

Թաթերի հետքերը և կեր որոնելիս կտցի թողած փոսիկները:

ՄՈՐԱԿՏՑԱՐ
Gallinago gallinago

Սարյակից խոշոր է: Փետրավորումը գորշավուն դեղին է՝ պտերով, փորիկը՝ սպիտակ:

➢ ***Նստակյաց*** տեսակ է:

➢ ***Բնադրում է*** խոնավ մարգագետիններում, ճահիճներում: Գարնանը արուի կտղուցականչի թռիչքը վայրասլաց է, որի ժամանակ լսվում է դռդռոցով մայոց՝ արձակված պոչի թռթռացող փետուրների կողմից:

ԿՐԿՆԱԿՏՑԱՐ
Gallinago media



Մորակտցարից ավելի բաց գույն ունի՝ կրծքին և փորիկին՝ լայնակի շերտերով: Ի տարբերություն մորակտցարի՝ թռչում է անձայն, առանց տնքտնքոցի: Թռիչքն ուղիղ է՝ առանց զիգզագների և դեպի կողմ նետումների:

➢ ***Չվող*** և պոլիգամ տեսակ է: Գարնանը արուները դրսևորում են խմբակային կտղուցականչ՝ կռվում են, վազում փետուրները ցցած և թևերն իջեցրած՝ արձակելով յուրօրինակ կլկլոցով, ղունղունոցով գեղգեղանք:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՄԵԾ ԻԼԻԿԱԿՏՑԱՐ
Limosa limosa

Աղավնուց ավելի մեծ է: Մարմնի վերևը գորշ պտերով է, գլուխն ու կուրծքը՝ ժանգաշիկակարմիր, փորիկը՝ սպիտակ:

- Կլոր տարին ***չվահյուր*** է:
- ***Ապրելավայրը*** խոնավ մարգագետինները, ճահիճներն են:
- ***Սնվում է*** միջատներով, ջրային անողնաշար կենդանիներով:

Մոնոգամ է: Բնադրում է ոչ մեծ գաղութներով: Բույնը չոր հողաթմբին է: Մայիս-հունիսին դնում է 4 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 21-24 օր և սերնդին խնամում մինչև թռչելը:

Գրանցված է «***Կարմիր գրքում***»:

ՄԵԾ ԱՐՈՐԻԿ
Numenius arquata



Ագռավից խոշոր է: Փետրավորման ընդհանուր գույնը գորշավուն մոխրագույն է՝ սև պտերով: Վերնապոչը սպիտակ է, կտուցը թեքված է դեպի ներքև:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ողողվող մարգագետինները, ճահիճներն են:
- ***Սնվում է*** հատապտուղներով, անողնաշար կենդանիներով:

Մոնոգամ է: Բնադրում է միայնակ, հազվադեպ՝ ոչ մեծ գաղութներով: Բույնը ոչ խոր փոսիկի մեջ է: Մայիս-հունիսին դնում է 4 ձու, որոնց վրա թխսում են երկու ծնողներն էլ՝ 28-30 օր: Ճուտիկները բնախույս են, սկսում են թռչել 5-6 շաբաթ հետո:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

Մեծ իլիկակտցարը թռիչքի ժամանակ. սպիտակ շերտեր թևերի և պոչի հիմքի վրա



Մեծ արոտիկը թռիչքի ժամանակ



Մեծ արոտիկի հետքը



Մեծ արոտիկի շաբաթական ճուտիկը

ՓՈՔՐ ՔԱՐԱԴՐ
Charadrius dubius

Սարյակի չափ է: Գագաթը, ծոծրակը և մեջքը կավագույն են, կոկորդը, փորիկը, կտցի վերևի բիծը՝ սպիտակ: Ակնօղակը վառ դեղին է, գլխին կան սև ու սպիտակ նախշեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ավազային և գլաքարային լողափերն են:
- ***Սնվում է*** միջատներով, ջրային անողնաշար կենդանիներով: Արագ վազում է՝ հաճախ կանգ առնելով և խոնարհվելով: Մոնոգամ է: Մայիս-հունիսին դնում է 4 ձու, որի վրա թխսում են երկու ծնողներն էլ՝ 24-26 օր: Ճուտիկները 4-րդ շաբաթում արդեն սկսում են թռչել:

ԿՈՎԱԿՏՅԱՐ
Philomachus pugnax

Աղավնուց փոքր է: Մարմնի վերևը շիկակարմիր գորշ է, խայտաբղետ: Արուի պարանոցին գարնանը կա բազմագույն փետուրներից «օձիք»: Էգը արուից բավական փոքր է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** խոնավ, ճահճոտ վայրերն են:
- ***Սնվում է*** միջատներով, անողնաշար կենդանիներով: Պոլիգամ է: Գարնանն արուներն անցկացնում են խմբակային մրցումներ՝ ցատկում են իրար վրա՝ կարծես կռվում են: Հունիսին էգը դնում է 4 ձու: Ձվերի վրա թխսում է 20-21 օր, հետո՝ ման ածում ճուտիկներին: Բնադրման շրջանից դուրս ձևավորում են փոքր երամներ:

Թռիչքի ժամանակ երևում է պոչի սպիտակ եզրաքուղը



Բույնը ոչ խոր փոս է, երբեմն՝ շրջապատված քարերով և խեցիներով

Քարաղրի հետքը ավազի վրա



Կովակտցար. երկու արու և մեկ էգ՝ կտղուցականչի մրցույթի ժամանակ

ԾԽԱԳՈՒՅՆ ԿՏՑԱՐ

Tringa nebularia

Աղավնուց մի քիչ է փոքր: Կտուցը թեթևակի վեր է թեքված: Գլուխը և մարմնի վերևը գորշավուն-մոխրագույն են, ներքևը՝ բաց գույնի, գլխի, պարանոցի և կրծքի վրա կան հստակ լայնակի պտեր: Վերնապոչը սպիտակ է: Բնադրում է անտառային լճակների, գետերի և ճահիճների մոտ: Կերը հայթայթում է ջրում: Հաճախ նստում է ծառերի վրա:

ՍԵՎՈՒԿ ԿՏՑԱՐ

Tringa ochropus

Սարյակից մի քիչ է մեծ: Մարմնի վերևից մուգ գորշ է, կուրծքն ու պարանոցը՝ ավելի բաց պուտերով: Փորիկը, պոչի հիմքը և վերնապոչը սպիտակ են և թռիչքի ժամանակ լավ ընդգծվում են մուգ մեջքի ֆոնին:



- ***Չվող*** տեսակ է:
- ***Բնադրում է*** անտառային գետերի և ճահիճների ափերին: 4 ձու դնելու համար օգտագործում է կեռնեխների և կաչաղակների հին բները: Հիմնականում թխսում է էգը՝ 3 շաբաթ: Ճուտիկներին ման են ածում երկու ծնողները:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԻՎԻՎ
Vanellus vanellus

Աղավնու չափ է: Թևերը լայն են, փուփուլը՝ երկար: Մեջքը գորշ-կանաչ է՝ փայլով, պարանոցի հետին մասին սև բիծ կա, այտերը և փորիկը սպիտակ են, ենթապոչը՝ նարնջագույն:

- ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:
- ***Սպրեվայրը*** խոնավ մարգագետիններն են, ճահիճները, դաշտերը:
- ***Սնվում է*** միջատներով, փափկամարմիններով, որդերով:

Բնադրում է միայնակ կամ փոքր գաղութներով: Մոնոգամ է: Բույնը ոչ խոր փոսիկ է՝ փռված խոտով: Ապրիլ-մայիսին դնում է 4 ձու, որոնց վրա թխսում են երկու ծնողները: Ճուտիկները բնախույս են, սկսում են թռչել 35-44 օր հետո:

ԿՏՑԱՐ ԿԱՉԱՂԱԿ
Haematopus ostralegus

Աղավնուց խոշոր է: Մարմնի վերևը և կուրծքը սև է, ներքևը՝ սպիտակ: Կտուցն ու թաթերը վառ կարմիր են:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Սպրեվայրը*** խոշոր գետերն ու լճերն են:
- ***Սնվում է*** փափկամարմիններով (խեցին բացում է նեղ կտուցով), որդերով (հանում է քարերի տակից):

Մոնոգամ է: Բնադրում է միայնակ՝ ավազային և քարքարոտ լողափերին, հազվադեպ՝ գաղութներով: Բույնը փոսիկ է՝ շրջապատված փոքր քարերով, խեցիներով, աղբով: Մայիս-հունիսին դնում է 3 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 28-29 օր:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:



Սովորական կիվիվի հետքը



Ընտանիք՝ **Կտցար կաչաղակներ** *Haematopodidae*



Կտցար կաչաղակի հետքը

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՂԱՎՆԻ
Columba palumbus



Բավական խոշոր է թխակապույտ աղավնուց: Մարմնի վերևը մոխրագույն-երկնագույն-գորշ է, կուրծքը՝ թխակապտավուն, վարդագույն-մոխրագույն: Պարանոցի և թևի ծալքին կան սպիտակ բծեր: Առաջնային թափափետուրները սևավուն են: Պոչի ծայրով անցնում է մուգ լայն շերտ:

➢ ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:

➢ ***Ապրելավայրը*** խառը և փշատերև անտառներն են:

➢ ***Մնվում է*** գետնին՝ տարբեր սերմերով:

Թռիչքն ուժեղ է, արագ, աղմուկով, թևերի թրխկոցով: Մոնոգամ է: Արուների կտղուցականչը ղունղունոցով թռիչքն է՝ թևերի բարձր թրխկոցով, դեպի վեր 15-20 մ թռիչքով: Շրջան կատարելուց հետո վերադառնում է էգի մոտ: Խուլ տեղերում բնադրում են միայնակ: Ոչ խիտ բույնը ծառի վրա է: Մայիսին դնում է 2 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 17-19 օր: Ճուտիկները բնում մնում են 21-28 օր: Բնից դուրս տարածքում մնում են երամով:

ՀՈԲԱԼ
Columba oenas



Նման է թխակապույտ աղավնուն, բայց հեշտությամբ է նստում ճյուղին:

Վերնապոչը մուգ է, թևերին կան ոչ ընդգծվող երկու շերտեր: Բնադրում է հին ծառերի փչակներում:

ԹԽԱԿԱՊՈՒՅՏ ԱՂԱՎՆԻ
Columba livia



Այս թռչունների ընդհանուր գունավորումը՝ թխակապույտ է, կուրծքը՝ մանուշակագույն փայլով, մոխրագույն թևերը՝ երկու մուգ շերտերով, վերնապոչը՝ սպիտակ: Քաղաքներում հանդիպում են տարբեր գունավորմամբ թռչուններ: Առաջացնում են մեծ երամներ: Ծառերի հաստ ճյուղերին նստում են հազվադեպ: Տարեկան ունենում է 2-3 սերունդ:

ՕՂԱԿԱՎՈՐ ՏԱՏՐԱԿ
Streptopelia decaocto

Թխակապույտ աղավնուց փոքր է: Գունավորումը դաշտային, գորշավուն-մոխրագույն է: Պարանոցին սև կիսաշրջան կա՝ շրջապատված սպիտակով: Թափափետուրները մուգ են:

- ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** կուլտուրական լանդշաֆտներն են:
- ***Մնվում է*** բույսերի սերմերով:

Դյուրահավատ թռչուն է: Բնադրում է քաղաքներում, գյուղերում՝ ծառերի կամ շենքերի վրա: Դնում է 2 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ մոտ 2 շաբաթ: Ճուտիկները թռչում են 3 շաբաթ հետո:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՏԱՏՐԱԿ
Streptopelia turtur

Թխակապույտ աղավնուց ավելի փոքր ու բարեկազմ է: Գլուխը և մեջքը գորշ են, թևերը դեղնավուն են՝ պտերով, մարմնի ներքևը՝ մոխրագույն-կարմրավուն: Վզին կան վառ սև ու սպիտակ շերտեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** սաղարթավոր և խառն անտառներն են:
- ***Մնվում է*** բույսերի սերմերով:

Թռիչքը թեթև է: Բնադրում է անտառների եզրերին, բացատներում: Բույնը ոչ խիտ է, տափակ, տեղադրված ոչ բարձր: Մայիսին դնում է 2 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 13-14 օր: Ճուտիկները թռչում են 3 շաբաթից: Բնադրումից հետո մնում են երամներով:



Հովհարանման պոչը՝ ծայրին սպիտակ լայն շերտով

Օղակավոր տատրակ



Պոչը սև է՝ սպիտակ եզրակով

Սովորական տատրակ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԿՈՒ
Cuculus canorus



Աղավնուց ավելի փոքր է և նիհար (երկար պոչի պատճառով մեծ է երևում): Մարմնի վերևը, գլուխը, կոկորդը և կրծքի վերին մասը մոխրագույն են: Սպիտակ կողքերին և փորիկին կա հստակ երևացող մուգ, լայնակի գծավորություն: Պոչը կլորավուն է՝ մուգ սպիտակ բծերով: Էգերը շիկակարմիր-գորշ են, ավելի սպիտակ ներքևից, մուգ, լայնակի շերտերով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր անտառներն են:
- ***Սնվում է*** միջատներով, դրանց թրթուրներով:

Ապրում են միայնակ: Գարնանը և ամռան առաջին կեսին բնորոշ է արուի կտղուցականչը՝ կկու կանչելը: Պոլիգամ տեսակ է և մշտական զույգ չի կազմում: Մեկ էգի հետևից վազում են մի քանի արուներ և զուգավորվում ձվերի հասունանալուն զուգընթաց: Սեփական բույն չունի, ձվերը դնում է մանր ճնճղուկանմանների տարբեր տեսակների բներում: Բազմացման շրջանը խիստ ձգված է: Մեկ սեզոնի ընթացքում էգը դնում է մինչև 20 ձու՝ մի քանի օր ընդմիջումներով: Ճուտիկի զարգացումն ընթանում է շատ արագ. նա ձվից դուրս է գալիս «որդեգրող» ծնողների ճուտիկների հետ միաժամանակ կամ ավելի շուտ: Ճուտիկները թռչում են 3 շաբաթական հասակում: Աշնանային-գարնանային չուերը կատարում են միայնակ:





Դեռևս կույր լինելով՝ կկվի ճուտիկը, հենվելով ոտքերով ու գլխով, «որդեգրող» ծնողների ձվերը կամ ճուտիկներին դուրս է նետում բնից և մնում մենակ, հակառակ դեպքում զարգացման համար բերած կերը չի բավարարի:



Ճանճորսը կերակրում է կկվի ճուտիկին

ԲՎԵՃ
Bubo bubo

Շատ խոշոր թռչուն է. թևերի բացվածքը՝ 170 սմ է: Փետրավորման ընդհանուր գույնը գորշ-շիկակարմիր է՝ մուգ պտերով: Գլխին ունի սև փետուրների փնջիկ՝ «ականջներ»:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր անտառներն են:
- ***Սնվում է*** կրծողներով, նապաստակներով, թռչուններով:

Խուլ, քիչ բնակեցված տարածքների զգուշավոր թռչուն է: Թռիչքն ուժեղ է, դանդաղ, անաղմուկ և համաչափ: Ակտիվ է մթնշաղին, գիշերը:



Մոնոգամ է: Զույգը պահպանվում է տարիներ շարունակ և որսի համար գրավում մեծ տարածք: Զմռան վերջին-գարնան սկզբին գիշերները լսվում է զույգի «անվանականչը»՝ ցածր, բարձր «ծիծաղ»: Բույնը գետնի վրա է, ժայռերի մեջ, այլ թռչունների մեծ բներում, անտառի անհասանելի տարածքներում: Ապրիլին դնում է 2-3 ձու: Թխսում է էգը՝ 34-36 օր: Ճուտիկները սկսում են թռչել 14 շաբաթ հետո, սակայն բույնը լքում են ավելի վաղ և այս ու այն կողմ գնում բնի հատվածում:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ԱՆՏԱՌԱԲՈՒ
Strix aluco

Ագռավից քիչ մեծ է: Գունավորումը գորշավուն-մոխրագույն է կամ շիկակարմիր-շագանակագույն՝ հստակ երևացող երկայնակի մուգ պտերով: Պոչը կարճ է, «ականջներ» չունի, աչքերը սև են:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր անտառներն են, հին այգիները:
- ***Սնվում է*** կրծողներով, գորտերով, հազվադեպ՝ թռչուններով, միջատներով:

Ակտիվ է միայն գիշերը: Ցերեկը անշարժանում է բվերին բնորոշ կեցվածքով: Թռիչքն անաղմուկ է, հանգիստ: Մոնոգամ է: Բնադրում է փչակներում, փտած ծառերի մեջ եղած դատարկություններում, հազվադեպ գիշատիչ թռչունների հին բներում, լքված շինություններում:

Արուի հարսանեկան երգը խուլ, թրթռացող դայլայլ է, որը լսվում է ձմռան վերջից: Ապրիլին դնում է 3-5 ձու: Թխսում է էգը՝ 28-30 օր: Ճուտիկները լքում են բույնը 7 շաբաթ հետո:

ԱԿԱՆՋԱՎՈՐ ԲՈՒ
Asio otus

Աղավնուց մի քիչ մեծ է: Մեջքը դեղնավուն-գորշ է՝ մարմար հիշեցնող գծերով, փորիկը ժանգագույն է՝ դեղին երանգով և մուգ պտերով:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր անտառներն են, հին զբոսայգիները, կուլտուրական լանդշաֆտները:
- ***Սնվում է*** կրծողներով, հազվադեպ՝ թռչուններով:

Ակտիվ է մթնշաղին և գիշերը: Բնադրում է այլ թռչունների հին բներում: Մայիսին դնում է 4-6 ձու: Թխսելը տևում է 27-28 օր: Ճուտիկները սկսում են թռչել 20-23 օր հետո:

ՃԱՀՃԱՅԻՆ ԲՈՒ
Asio flammeus

Աղավնուց մի քիչ մեծ է: Փետրավորման ընդհանուր գույնը գորշ-շագանակագույն է՝ բաց և մուգ պտերով: Դիմային սկավառակը «կեղտոտ է»: Ականջների մազափունջը հազիվ նկատելի է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** մարգագետիններն են, ճահիճները:
- ***Սնվում է*** կրծողներով: Ակտիվ է մթնշաղին, գիշերը: Ծառերին չի նստում: Գարնանն արուն կտղուցականչի թռիչքով հսկում է բնադրման տարածքը՝ թրխկացնելով թևերով: Բույնը կառուցում է չոր խոտից, գետնի վրա: Ապրիլ-մայիսին դնում է 4-9 ձու: Թխսում է էգը՝ 25-28 օր: Ճուտիկները լքում են բույնը 2 շաբաթ հետո, թռչել սկսում են 4 շաբաթ անց:



Հանգստի ժամանակ թեվերն անցնում են պոչից: Թռչելիս և գիշերը դիմային սկավառակը լավ ընդգծված է, ականջների մազափունջը՝ հազիվ նկատելի:

Թևերն ավելի նեղ են: Հաճախ թռչում է ցերեկը, և լավ երևում է թևերի ներքևի ավելի բաց գույնը: Թռչում է առանց շտապելու, ճոճվելով:

ԹԱՎՇԱՌՏ ԲՈՒ
Aegolius funereus

Աղավնուց բավական փոքր է: Դիմային սկավառակը բաց գույնի է՝ բաժանված երկու կեսի: Մեջքը գորշ է՝ սպիտակ բծերով, փորիկը՝ բաց գույնի, գորշավուն պտերով:

- ***Նստակյաց և քոչող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** խուլ անտառներն են:
- ***Սնվում է*** կրծողներով, թռչուններով: Բնադրում է փչակներում: Ապրիլին դնում է 3-6 ձու: Թխսում է էգը:

Ճուտիկները թռչում են 5-րդ շաբաթում: Գրանցված է« ***Կարմիր գրքում***»:

ՏՆԱՅԻՆ ԲՎԻԿ
Atene noctua



Դիմային սկավառակը թույլ է արտահայտված: Գունավորումը գորշ է (փորիկի վրա՝ ավազաշիկակարմիր)՝ սպիտակ պտերով:

- ***Նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց տարածքներն են, կուլտուրական լանդշաֆտները:
- ***Սնվում է*** կրծողներով, թռչուններով, մողեսներով, միջատներով: Բնադրում է փչակներում, որջերում, կառույցներում: Դնում է 3-5 ձու: Թխսում է էգը՝ 25-28 օր: Ճուտիկները սկսում են թռչել 4-րդ, 5-րդ շաբաթում:

ԱՅԾԿԼԻԹ

Caprimulgus europaeus



Աղավնուց ավելի փոքր է և նրբագեղ: Փետրավորման ընդհանուր գույնը շագանակագույն-մոխրագույն է՝ կրծքին մուգ շերտերով և մեջքին ժանգագույն բծերով: Արուի ղեկափետուրների ծայրին և առաջնային թափափետուրների մեջտեղում կան սպիտակ բծեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բացատներով նոսր անտառներն են:
- ***Մնվում է*** միջատներով:

Կերը որսում է մթնշաղին՝ թռիչքի ժամանակ: Թռիչքն անաղմուկ է, թեթև, խուսավարելով, կտրուկ շրջադարձերով և թևերի խորը թափահարումներով: Ցերեկը թաքնվում է գետնին կամ ճյուղի վրա՝ ձգվելով հորիզոնական ուղղությամբ: Գարնանն արուն գոմոռոց է արձակում և կատարում կտղուցականչի թռիչքներ. թռչում-անցնում է բաց տարածքներով՝ մարմինը պահելով ուղղահայաց, բացելով պոչը, բարձր թրխկացնելով թևերով, ընդհատուն ճիչերով: Ձվերը դնում է հենց անտառային փռոցի վրա՝ 2 ձու: 17-18 օր թխսում են երկու ծնողները: Ճուտիկները կիսաբնախույս են: Աստիճանաբար տեղափոխվում են գետնի վրա՝ բնի մոտ՝ թողնելով արտաթորանքի չորացած հետքեր: Կյանքի 16-18-րդ օրը սկսում են թռչել:

Համեմատության համար.



Կկու

Այծկիթի գլուխը

Հողավար բազե

Այծկիթի բույնը



Այծկիթը գետնի վրա

ՍԵՎ ՄԱՆԳԱՂԱԹԵՎ

Apus apus

Սարյակի չափ է, ավելի մեծ է երևում երկար թևերի պատճառով: Ողջ փետրավորումը սև-գորշ է, բացի ոչ մաքուր սպիտակ կոկորդից: Կտուցը կարճ է՝ լայն կտրվածքով, եզրերին խոզաններ: Պոչը եղանաձև է: Թաթերը թույլ են, բոլոր մատներն ուղղված են առաջ և հարմարված են կառչելուն:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ժայռերը, գյուղերը, քաղաքներն են, հազվադեպ՝ բարձրաբուն ծառերը:
- ***Սնվում է*** միջատներով:

Գրեթե միշտ օդում է, նույնիսկ քնում է թռիչքի ժամանակ: Չի կարողանում քայլել գետնի վրայով՝ սողում է: Հորիզոնական մակերեսից թռչել չի կարողանում, պարզապես նետվում է ներքև ու բացում թևերը: Թռիչքը շատ արագ է, թևերի ոչ խորը թափահարումներով և կարճատև սավառնելով՝ արձակելով զիլ ճիչ: Կերը որսում է թռիչքի ընթացքում: Բնադրում է գաղութներով՝ փչակներում, ճեղքերում, քուղերի տակ, սարյակների բներում: Հունիսին դնում է 2-3 ձու: Թխսում են երկու ծնողները: Եղանակի ցրտելու կամ անձրևի ժամանակ ճուտիկները քարանում-անշարժանում են մի քանի օրով: Բույնը լքում են 6 շաբաթ հետո:

Վերևում ձախից՝ ***գյուղական ծիծեռնակ***,
աջից՝ ***քաղաքային մանգաղաթն***,
ներքևում՝ ***սև մանգաղաթն***

ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ԱԼԿԻՈՆ
Alcedo atthis

Ճնճղուկից մի քիչ մեծ է: Մարմնի վերևը և թևերը երկնագույն- կանաչ են, ներքևը և ենթապոչը՝ նարնջագույն-շիկակարմիր: Կոկորդը և կտուցից մինչև ուսն ընկած շերտերը՝ բաց դեղին:

- ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** թափանցիկ ջրերով գետերի և լճերի ափերն են:
- ***Մնվում է*** մանր ձկներով, անողնաշար կենդանիներով: Կերը հայթայթում է սուզվելով: Բույն կառուցելու համար փորում է կավային կամ ավազային զառիթափերը: Մայիս-հունիսին դնում է 6-7 ձու: Ճուտիկները սկսում են թռչել 23-27 օր հետո:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ՄԵՂՎԱԿԵՐ
Merops apiaster

Սարյակի չափ է: Կոկորդը վառ դեղին է, գլուխը և մեջքը՝ շագանակագույն, ուսերին կան ոսկեգույն բծեր: Մարմնի ներքևը երկնագույն է, պոչը՝ կանաչ, երկարացած միջին ղեկափետուրներով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** ձորակները, հեղեղատները, գետահովիտներն են:
- ***Մնվում է*** միջատներով: Կերը հայթայթում է թռչելիս: Թռիչքը թեթև է, ճախրող: Գաղութներով բնադրում է զառիթափերին: Մայիս-հունիսին դնում է 4-7 ձու: Ծնողները թխսում են հերթով՝ 20-21 օր: Ճուտիկները թռչում են 20-25 օր հետո:



Երկնագույն ալկիոնի բույնը

Ընտանիք՝ **Մեղվակերներ** *Meropidae*

Մեղվակերի բնի տեղադրվածության սխեման. մուտքի երկարությունը՝ 1-2 մ, տրամագիծը՝ 8-10 սմ

ՀՈՊՈՊ
Upupa epops

Աղավնուց շատ քիչ փոքր է: Փետրավորումը բաց շիկակարմիր է: Թևերը, պոչը սև են՝ սպիտակ շերտերով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** միջատներով և դրանց թրթուրներով: Կերը հայթայթում է գետնին: Թռիչքն անշտապ է, «սուզվող»: Բույնը կառուցում է փչակներում, ճեղքերում, որջերում: Ապրիլ-մայիսին դնում է 5-8 ձու, թխսում՝ 17-19 օր: Ճուտիկները սկսում են թռչել 20-27 օր հետո:

ՆԵՐԿԱՐԱՐ
Coracias garrulus

Աղավնու չափ է: Ողջ գունավորումը, բացի կավագորշ մեջքից, բաց երկնագույն է: Թափափետուրները մուգ են:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց տարածքները, լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** միջատներով, մանր ողնաշարավոր կենդանիներով: Դարանակալում է զոհին՝ նստելով էլեկտրալարերի, սյուների, չոր ճյուղերի վրա: Բները կառուցում է փչակներում, ավազային զառիթափերին: Մայիս-հունիսին դնում է 4-5 ձու, թխսում՝ 16-18 օր: Ճուտիկները բնից դուրս են թռչում 4 շաբաթ հետո:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:



Ընտանիք՝ **Ներկարարներ** *Caracidae*



ՍԵՎ ՓԱՅՏՓՈՐ
Dryocopus martius

Չափերով գրեթե մոխրագույն ագռավի չափ է: Փետրավորման գույնն անփայլ սև է: Արուի գլխի վերևը, էգի միայն ծոծրակը վառ մորեգույն-կարմիր է: Կտուցը մեծ է, սուր, մոխրագույն:

- ***Նստակյաց*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բարձրաբուն փշատերև և խառն անտառներն են:
- ***Սնվում է*** միջատներով, դրանց թրթուրներով:

Հանդիպում է միայնակ կամ զույգերով: Ծառերի բների վրայով տեղաշարժվում է ցատկերով: Կեր որոնելիս բների վրա փորում է ձագարաձև խորություններ: Կտղուցականչի «թմբկահարվածները» շատ ուժեղ են և խուլ: Բնի համար թռչունը ծառերին 8-15 մ բարձրության վրա փչակ է փորում՝ ձվաձև մուտքով (10-12x 5-7 սմ չափերով): Ապրիլ-մայիսին դնում է 3-5 ձու, թխսում՝ մոտ 2 շաբաթ:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ԽԱՅՏԱԲՂԵՏ ՓԱՅՏՓՈՐ

Dendrocopos major

Սարյակից մեծ է: Մեջքը, գագաթը, թևերը, պոչը, այտերի վրայի և կողքերի շերտերը սև են: Ճակատը, այտերը, կողքերը, փորը, թևերի վրայի շերտերը և ուսերի վրայի մեծ երկարավուն բծերը սպիտակ են: Արուի ենթապոչը և գագաթը կարմիր են: Էգի գագաթը սև է:

- ***Նստակյաց և քոչող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր տիպի անտառներն են:
- ***Սնվում է*** միջատներով, ճուտիկներով և մանր թռչունների ձվերով, ձմռանը նաև փշատերև ծառերի սերմերով:

Ծառի բնին նստում է ուղղահայաց՝ հենվելով կոշտ ղեկափետուրներին: Տեղաշարժվում է առաջ նետվելով: Թռիչքն ալիքաձև է, նետումներով: Թևերի թափահարումներին հաջորդում են անկումները՝ սեղմված թևերով: Սնվում է կեղևը փորելով: Վաղ գարնանը արձակում է կտղուցականչի «թմբկահարվածներ»՝ հաճախ կտուցով հարվածելով ծառի չոր գագաթին կամ կոտրված բնին (1-15 մ բարձրության վրա): Ապրիլ-մայիսին դնում է 4-6 ձու: Հիմնականում թխսում է էգը՝ 15-17 օր: Ճտերը լքում են բույնը 18-21 օր հետո՝ դեռևս չկարողանալով թռչել: Ձմռանը քոչ է կատարում միայնակ կամ երաշտահավերի, սիտեղների և ծվծվիկների ընկերակցությամբ:



Փայտփորի կտցահարած եղևնու և սոճու կոները, ընկույզները, կեչու կեղևը

Ձախից կոների կոտրելու «դարբնոցն» է, կենտրոնում՝ կաղամախիի բնի վրա փորած փչակն է, աջից՝ սղոցած փչակ (խորությունը՝ 25, լայնությունը՝ 15 սմ):

ՍՊԻՏԱԿԱՄԵՋՔ ՓԱՅՏՓՈՐ
Dendrocopos leucotos

Մեջքը, թևերի վրայի լայն շերտերը, վերնապոչը սպիտակ են: Փորիկը և կողքերը՝ շիկակարմրավուն են՝ մուգ, երկարավուն պտերով: Արուի գլխի վերևը կարմիր է, էգինը՝ սև:

ՓՈՔՐ ՓԱՅՏՓՈՐ
Dendrocopos minor

Ճնճղուկից մի քիչ է մեծ: Մեջքն ու թևերը սև են՝ սպիտակ շերտերով: Այտերը և փորիկը սպիտակ են: Արուի գագաթը կարմիր է, էգինը՝ սպիտակ:

ՎԻԶԳՅՈՒԿ
Junx torquilla

Ճնճղուկից մի փոքր մեծ է: Փետրավորման ընդհանուր գույնը գորշավուն-մոխրագույն է՝ պտերով, որոնք բաց գույնի են վերևի և մուգ՝ ներքևի կողմում: Պոչի և թևերի վրա կան դեղնավուն շերտեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** խառը, լուսավոր բացատներով անտառներն են:
- ***Սնվում է*** միջատներով, մրջյուններով և դրանց հարսնյակներով:

Հաստ ճյուղերի վրայով տեղաշարժվում է առաջ նետվելով՝ ձգելով վիզը: Վախենալիս ցցում է փետուրները, պտտում է գլուխը և արձակում թշշոց: Կտուցը թույլ է, կեղևը չի ծակում, կերը հավաքում է գետնին, մրջնանոցներում: Բնադրում է կոճղերի և ծառերի փչակներում:

Մայիս-հունիսին դնում է 7-12 ձու: Հիմնականում թխսում է էգը՝ մոտ 12 օր: Ճուտիկները բնում մնում են մոտ 3 շաբաթ: Թռչելուց առաջ շատ ակտիվ և շարժուն են: Թույլ ճուտիկներին կարող են տրորել՝ վերածելով տափակ մումիայի:

Ընտանիք՝ **Արտույտներ** - *Alaudidae*

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՐՏՈՒՅՏ

Alauda arvensis

Ճնճղուկից մի փոքր մեծ է: Մարմինը վերևից գորշավուն է՝ մուգ պտերով, ներքևից՝ սպիտակ, գորշ բծերով: Գլխին կա ոչ երկար փուփուլ: Պոչի արտաքին փետուրները սպիտակ են և երևում են մոտ հեռավորության վրա թռչելիս:

➢ ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:

➢ ***Ապրելավայրը*** դաշտերը, չոր մարգագետիններն են:

➢ ***Սնվում է*** միջատներով, սարդերով, բազմոտանիներով, որդերով, սերմերով:

Բնադրման վայրեր է հասնում մարտի վերջին, ապրիլի սկզբին: Թռիչքը թեթև է, անշտապ: Կտղուցականչն արուներն ավելի հաճախ երգում են թռիչքի ժամանակ. վեր են բարձրանում, դանդաղ իջնում՝ դողացնելով թևերով, հետո ուղղաձիգ իջնում գետնին: Ապրիլ-հուլիսին ունենում են երկու սերունդ: Բույնը էգը կառուցում է գետնին՝ փոքր փոսիկի տեսքով: Դնում է 4-5 ձու:

Էգը թխսում է 12-14 օր: Ձվից դուրս գալուց 8-10 օր հետո ճուտիկները լքում են բույնը՝ դեռևս չկարողանալով թռչել: Ձմեռելու են չվում սեպտեմբեր-հոկտեմբերին:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԴՐԱԽՏԱՊԱՆ
Emberiza citrinella



Ճնճղուկի չափ է: Արուի գլուխը և մարմնի ներքևը դեղին են՝ մուգ պտերով, մեջքը և կողքերը՝ շագանակագույն: Էգի մոտ դեղին գույնը փոխարինվում է դեղնավուն-մոխրագույնով, շագանակագույնը՝ կավագորշով: Վերնապոչը շագանակագույն է:

- ***Բնադրող և ձմեռող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** նոսր անտառները, բացատները, հատատեղերն են:
- ***Սնվում է*** սերմերով, կանաչով, ճուտիկներին կերակրում է միջատներով: Սնվում է գետնի վրա:

Ձմեռն անցկացնում են ոչ մեծ երամներով, գարունն ու ամառը՝ զույգերով: Արուն երգում է՝ ծառի կամ թփի գագաթին նստած: Չոր ընձյուղներից, արմատիկներից, բարակ ճյուղերից էգը գետնի վրա բույն է կառուցում թփի տակ կամ թաքցնում խոտերի մեջ, որը տեփուրանման է՝ պատված փափուկ խոտով և ձիու մազերով: Ապրիլից մինչև հուլիս ունենում է 2-3 սերունդ: Դնում է 4-5 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 12-14 օր: Հոկտեմբերից գաղթում են այլ հատիկակեր թռչունների հետ:

ՍՊԻՏԱԿ ԽԱՂՏՏՆԻԿ

Motacilla alba



Ճնճղուկից ավելի նրբագեղ է: Արուի գագաթը, պարանոցի հետևը, կոկորդը, կրծքի վերնամասը և պոչը սև են, մեջքը՝ մոխրագույն, մնացած փետրավորումը՝ սպիտակ: Էգն ավելի գունատ է, սև գույնը փոխարինվել է մուգ մոխրագույնով:

➢ ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է:

➢ ***Ապրելավայրը*** ջրավազանների ափերը, կուլտուրական լանդշաֆտները:

➢ ***Սնվում է*** տարբեր անողնաշար կենդանիներով:

Գետնին վազում է՝ ճոճելով պոչը: Թռիչքը ալիքաձև է՝ թևերի արագ թափահարումներով: Բնադրման վայրերում հայտնվում է մարտի վերջին, ապրիլի սկզբին: Տարեկան ունենում է 2-3 սերունդ:



Բների տեղադրման վայրերը շատ բազմազան են՝ գետնի վրա, ճեղքերում, փչակներում, կառույցներում: Բույնը մեծ է, ամուր՝ ընձյուղներից, արմատիկներից, տերևներից, մամուռից: Տեփուրանման է՝ ծածկված բրդով, մազերով, փետուրներով: Դնում է 5-6 ձու: Թխսում է էգը՝ 12-14 օր: Ծնողները երկու շաբաթ կերակրում են ճուտիկներին: Ձմեռելու են թռչում սեպտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՁԻԱԹՌՉՆԱԿ
Anthus trivialis



Ագռավի չափ է: Մարմնի վերևը ձիթապտղագույն-շագանակագույն է՝պտերով, կուրծքը ժանգագույն է՝ մուգ բծերով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** նոսր անտառները, հատատեղերը, բացատները, ծառերով անմշակ հողատարածքներն են:
- ***Սնվում է*** անողնաշար կենդանիներով:

Բնադրման վայրեր է հասնում ապրիլի վերջին, մայիսին: Արուն կտղուցականչի թռիչքի ժամանակ օդ է բարձրանում ծառի կամ թփի գագաթից, բարձրություն վերցնում, այնուհետև թռչում է այլ ծառի գագաթ: Բույնը գետնի վրա է, դնում է՝ 5-6 ձու: Թխսում է էգը՝ 12-13 օր: Հունիս-հուլիսին կարող է ձվադրել երկրորդ անգամ:



ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԱՐՅԱԿ

Sturnus vulgaris

Փետրավորումը սև է՝ կանաչավուն-կապույտ մետաղական փայլով, իսկ աշնանը և գարնանը՝ սպիտակ պտերով՝ փետուրների սպիտակ ծայրերի ետևից: Բազմացման շրջանի ընթացքում դրանք գունազրկվում են, ամռանը գունավորումը սև է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** նոսր անտառները, կուլտուրական լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** միջատներով, թրթուրներով, որդերով, հատապտուղներով, մրգերով:

Բնադրման վայր է հասնում ապրիլի սկզբին, մայիսի վերջին: Սնվում է գետնին՝ բաց տարածքներում, մարգագետիններում: Երգը տարբեր թռչունների ձայների նմանակումն է: Բույնը կառուցում է փչակներում, սարյակների բներում, կառույցներում, ջրավազանների ափերի կավային զառիթափերին: Հնարավորության դեպքում ապրում է գաղութներով:

Ապրիլ-հունիսին դնում է 4-6 ձու: Հերթով 13-14 օր թխսում են երկու ծնողները: Ճուտիկները լքում են բույնը 18-22 օր հետո: Ամռան վերջին, աշնանը կազմում են մեծ երամներ: Հոկտեմբերի սկզբին թռչում են ձմեռելու:

ՊԻՐՈԼ
Oriolus oriolus

Սարյակից մի քիչ մեծ է: Արուն վառ դեղին է՝ սև թևերով ու պոչով (բացառությամբ ծայրաղեկափետուրների) և աչքերով անցնող շերտով: Էգը դեղնավուն-կանաչ է՝ գորշ պտերով:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** սաղարթավոր և խառն անտառները, պուրակներն են:
- ***Սնվում է*** միջատներով, թրթուրներով (նաև մազիկներով պատված):

Հիմնականում մնում է ծառերի սաղարթում: Բնադրման վայր է հասնում մայիսի կեսերին, վերջին: Երգը դանդաղ, ֆլեյտայի նվագը հիշեցնող ելևէջներով սուլոց է: Կանչը սուր ճռճռոց է:

Բույնը գտնվում է 6-20 մ բարձրության վրա՝ բարակ ճյուղերի երկճեղման տեղում՝ կախված ամուր զամբյուղի տեսքով: Հունիսի առաջին կեսին դնում է 3-5 ձու: Էգը թխսում է 14-15 օր: Ճուտիկները բույնը լքում են 14-15 օր հետո, սկսում են թռչել կյանքի 18-20-րդ օրը: Ձմեռելու են թռչում օգոստոսի կեսերին:

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՇԱՄՓՐՈՒԿ
Lanius excubitor

Սարյակից մեծ է: Մարմնի վերևը մոխրագույն է, աչքերով անցնող շերտը, թևերն ու պոչը՝ սև, իսկ ներքևը, թևերի և պոչի վրա եղած բծերը՝ սպիտակ:

- ***Նստակյաց,*** առանձին տեղերում ***քոչող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** թփերով և միայնակ ծառերով բաց լանդշաֆտներ են:
- ***Սնվում է*** միջատներով, թռչուններով, մանր կրծողներով, մողեսներով:

Անվախ և ակտիվ գիշատիչ է: Բնադրում է ապրիլ-հունիսին: Խոշոր բույնը կառուցում է թփին կամ ծառին՝ 1,5-4 մ բարձրության վրա: Դնում է 5-7 ձու: Էգը թխսում է 15-16 օր: Ճուտիկները բնում մնում են 19-20 օր: Թռչելուց հետո կերակրվում են ևս 2 շաբաթ:

ԺՈՒԼԱՆ
Lanius collurio

Սարյակից փոքր է: Արուի գլուխն ու պարանոցը մոխրագույն են, մեջքը՝ շագանակագույն, պոչը, թևերը, աչքերով անցնող շերտը՝ սև, մարմնի ներքևը՝ սպիտակ: Էգը վերևից գորշ է, ներքևից՝ մոխրավուն, թեփուկանման նկարով:

- ***Նստակյաց,*** առանձին տեղերում ***քոչող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** թփուտներն են, բացատները:
- ***Սնվում է*** միջատներով, մանր թռչուններով, կրծողներով, մողեսներով: Բնադրման վայր է հասնում մայիսին, ձմեռելու մեկնում՝ սեպտեմբերին:

Բույնը կառուցում է 1-3 մ բարձրության վրա՝ ճոճվող թփի գագաթին, մայիս-հունիսին դնում է 4-7 ձու: Հիմնականում թխսում է էգը՝ 14 օր: Բնում ճուտիկներին կերակրում է 15 օր, ևս 1-2 շաբաթ՝ թռչելուց հետո:



Մոխրագույն շամփրուկի կողմից գլխատված և ճյուղին հագցրած դաշտամուկ



Շամփրուկ. ձախից փշի վրա որսի մնացորդն է՝ երգեցիկ փոքր թռչնի թևը

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Hirundo rustica



Մարմնի վերևը կապտասև է, կոկորդը և ճակատը՝ ժանգագույն, իսկ ներքևը՝ սպիտակ: Բնադրման վայր է հասնում ապրիլի վերջին, մայիսի սկզբին: Բույնը կիսագնդաձև է՝ կավի գնդիկներից և խոտից, որն ամրացնում է պատին: Մայիսին դնում է 4-5 ձու: Թխսում է էգը՝ մինչև 16 օր: Ճուտիկները բնում մնում են 23-24 օր: Ձմեռելու վայրեր են թռչում սեպտեմբերի սկզբին:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԾԻԾԵՌՆԱԿ

Delichon urbica

Մարմնի վերևը սև է՝ կապտավուն փայլով, ներքևը և վերնապոչը՝ սպիտակ: Բնադրման վայրում է հայտնվում մայիսի սկզբին: Բույնը փակ է՝ վերևում անցքով, կառուցում է խոնավ հողից և ամրացնում շենքի պատին կամ առաստաղին: Մայիսի վերջին դնում է 4-6 ձու: Թխսումը տևում է մոտ 2 շաբաթ: Ճուտիկներն թռչում են 19-20 օր հետո, որոնց ծնողները կերակրում են ևս 10 օր: Ձմեռելու վայրեր են թռչում օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին:

ԱՌԱՓՆՅԱ ԾԻԾԵՌՆԱԿ

Riparia riparia

Մարմնի վերևը և կրծքով անցնող շերտը գորշ են: Բնադրավայրեր են հասնում մայիսի սկզբին: Բնադրում է ափերի զառիթափերին՝ փորելով հորիզոնական բույն մինչև 1 մ երկարությամբ: Դնում է 3-5 ձու: Թխսումը տևում է 12-16 օր: Ճուտիկները թռչում են 20-րդ օրը: Ձմեռելու են մեկնում օգոստոսի վերջին:


Գյուղական
ծիծեռնակ
Քաղաքային
ծիծեռնակ
Առափնյա
ծիծեռնակ

ԽԱՅՏԱԲՂԵՏ ՃԱՆՃՈՐՍ
Ficedula albicollis

Ագռավից փոքր է: Գլուխը, մեջքը, պոչը և թևերը սև են, ճակատը, մարմնի ներքևը, թևերի վրա եղած շերտերը՝ սպիտակ: Էգը գորշավուն-մոխրագույն է: Թևերով թափահարում է յուրահատուկ կերպով, խոնարհվում է և ճոճում է պոչը:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր տիպի անտառները, զբոսայգիները, այգիներն են:
- ***Սնվում է*** միջատներով, սարդերով, մրգերով, սերմերով:

Կարճ երգը սուլոցային մեղեդի է, որը տարբեր արուների մոտ տատանվում է ըստ երկարության և ռիթմի: Բույնը կառուցում է փչակներում, ճեղքերում, նաև սարյակների բներում, որոնք գրավում է մեծ հաճույքով (արհեստական բների տեղադրումով թվաքանակը կարելի է մեծացնել 20 անգամ): Մայիս-հունիսին դնում է 5-6 ձու: Էգը թխսում է 14 օր: Ճուտիկները 16-18 օր հետո լքում են բույնը: Ձմեռելու վայրեր են թռչում օգոստոսի կեսերին:

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՃԱՆՃՈՐՍ
Muscicapa striata

Ագռավից մի քիչ է փոքր: Մարմնի վերևը շագանակավուն-մոխրագույն է, ներքևը՝ մոխրագույն-սպիտակ: Գագաթին, պարանոցին և կրծքին կան մուգ պտեր:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** լուսավոր անտառները, բացատները, հատատեղերը, կուլտուրական լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** միջատներով:

Բնադրման վայր է հասնում մայիսի կեսին: Թռչնին բնորոշ է ուղղահայց կեցվածքը և թևերն անընդհատ թափահարելը: Զոհին որսում է թռիչքի ժամանակ՝ հաճախ կատարելով անսպասելի կտրուկ նետումներ: Երգում է կամաց, ոչ արտահայտիչ: Բույնը կառուցում է բնի երկճեղքման տեղում, կոճղերին, ճեղքերում, կիսափչակներում, պատերի բաց ճեղքերում և այլ տեղերում: Մայիս-հունիսին դնում է 4-5 ձու: Հիմնականում թխսում է էգը՝ 11-12 օր: Ճուտիկներին կերակրում է 14-15 օր: Առանձին զույգեր հուլիսին երկրորդ անգամ են ձվադրում: Օգոստոսի վերջին թռչում են ձմեռելու վայրեր:

ԱՄՈՒՐԻԿ
Fringilla coelebs

Ճնճղուկի չափ է: Արուի գլուխը և վիզը մոխրագույն-երկնագույն է, մեջքը՝ շագանակագույն, վերնապոչը՝ կանաչ, թևերն ու պոչը՝ սև-գորշ, կոկորդը, այտերը և մարմնի ներքևը բալի գույն ունեն: Թևի վրա կան լայն ու նեղ, վառ սպիտակ շերտեր: Էգը մոխրագույն-գորշ է:

- ***Նստակյաց և տարածված*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր տիպի անտառները, զբոսայգիները, այգիներն են:
- ***Մնվում է*** միջատներով, սերմերով, կանաչով:

Բնադրման վայրում է հայտնվում մարտի վերջին, ապրիլի սկզբին: Արուներն առաջինն են հայտնվում, գրավում բնադրման վայրը և սկսում երգել: Երգը կտրուկ, վայրընթաց սուլոցով դայլայլ է: Բույնը կառուցում է բնի երկճեղքման տեղում, հորիզոնական ճյուղի վրա՝ հուսալիորեն քողարկելով քարաքոսներով և մամուռով: Ապրիլ-մայիսին դնում է 4-6 ձու: Թխսումը տևում է 2 շաբաթ: Ճուտիկները բնում մնում են 12-14 օր: Թռչունների մի մասը երկրորդ անգամ է ձվադրում: Սեպտեմբեր-հոկտեմբերին թռչում են ձմեռելու վայրեր:

ԿԱՐՄՐԱԳԱՏԱՐ
Carduelis carduelis

Ճնճղուկի չափ է: Գագաթը, վզի հետևը, թևերն ու պոչը սև են: Մեջքը և կրծքի վրայի բծերը նուրբ շագանակագույն են: Թևի վրայի շերտը դեղին է: Ճակատը, կտցի հիմքը և կզակը մուգ կարմիր են:

- ***Նստակյաց և քոչող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** լուսավոր, սաղարթավոր և խառն անտառները, զբոսայգիները, կուլտուրական լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** միջատներով, սերմերով:

Զույգերը ձևավորվում են ապրիլին: Արուի կտղուցականչի երգը ձայնեղ, արագ դայլայլ է: Երգում է ծառերի գագաթին: Բույնը կողքային, 3-12 մ բարձրության ճյուղի վրա է, որը հյուսվում է խնամքով, միահյուսում ոստայնով և քարաքոսով: Մայիս-հունիսին դնում է 4-6 ձու: Էգը թխսում է 12-13 օր, որի ընթացքում արուն կերակրում է նրան: Ճուտիկները բնում մնում են 13-14 օր, որից հետո ևս 10 օր կերակրվում են ծնողների կողմից: Աշնանն ու ձմռանը երամներով քոչում են ամայի տարածքներ, դաշտեր՝ սնվելով ձյան տակից երևացող վայրի բույսերի սերմերով:

ԵՂԵՎՆՈՒ ԽԱՉԿՏՈՒՑ
Loxia curvirostra

Ճնճղուկից մեծ է: Արուն աղյուսագույն-կարմիր է, էգը՝ դեղնականաչ պտերով:

- Ապրելավայրը փշատերև անտառներն են:
- ***Նստակյաց և քոչող*** տեսակ է:
- ***Մնվում է*** եղևնու և սոճու սերմերով: Թեփուկները բացում է ծայրում խաչվող կտցի օգնությամբ: Կերի առատության դեպքում բնադրում է հունվարից մինչև ապրիլ: Տարեկան ձվադրում է մեկ-երկու անգամ 3-5 ձու: Սակավ բերքատու տարիներին զանգվածային քոչեր է կատարում:

Գրանցված է ՀՀ «***Կարմիր գրքում***»:

ՀԱՏԲԵԿԻՉ
Coccothraustes coccothraustes



Սարյակից մի քիչ է փոքր: Ընդհանուր փետրավորումը ժանգագույն-շագանակագույն է, թևերը, պոչը, կտցի մոտ եղած բծերը սև են, թևերի և պոչի վրայի շերտերը՝ սպիտակ: Կտուցը զանգվածեղ է, կոնաձև:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է, հազվադեպ է ձմեռում:
- ***Մնվում է*** տարբեր պտուղների կորիզներով, սերմերով: Բնադրում է մայիսին-հունիսին՝ 4-6 ձու: Հետբնադրման շրջանում գաղթում է՝ փնտրելով թխենու և բալենու բերքառատ մացառուտներ:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԽԱԾԿՏԻԿ
Pyrrhula pyrrhula



Ճնճղուկից մեծ է: Արուի գլուխը, թևերը, պոչը սև են, մեջքը մոխրագույն-երկնագույն է, վերնապոչը, ենթապոչը, թևի վրա եղած շերտը՝ սպիտակ, մարմնի ներքևը՝ բալագույն-կարմիր: Էգի մոտ կարմիր գույնը փոխարինվել է գորշ-մոխրագույնով, նկատելի են աշնանը և ձմռանը: Քոչում են ոչ մեծ երամներով, սնվում թխկիի, հացենու, յասամանի, վայրի բույսերի սերմերով, բողբոջներով:

Ընտանիք՝ **Սրնգահավեր** *Bombycillidae*

ՍՐՆԳԱՀԱՎ
Bombycilla garrulus

Սարյակի մեծության է: Փետրավորումը գորշ է, գինեգույն-վարդագույն՝ ծխագույն երանգով: Կզակը, թևերը և պոչը սև են՝ վառ դեղին երիզով: Թևերի վրա կան երկու սպիտակ բծեր և կարմիր եղջրային թիթեղիկներ՝ երկրորդային թափափետուրների առանցքների ծայրերին: Ձայնը նուրբ, «արծաթյա» դայլայլ է: Հոկտեմբերից մինչև մայիս քոչում է երամներով (մինչև 300 առանձնյակ)՝ փնտրելով մասրենու, արոսի, ալոճենու և այլ բույսերի պտուղներ:

ԿԵՌՆԵԽՆԵՐ
Turdus sp.



Սարյակի մեծության, երկար ոտքերով, ուժեղ թռչուն է՝ համեմատաբար երկար թևերով ու պոչով: Մարմնի վերևը ձիթապտղագույն-գորշ է, ներքևը՝ բաց գույնի, խոշոր ու մուգ կաթիլանման պտերով (բացի սև կեռնեխից):

➢ ***Բնադրող և նստակյաց*** տեսակ է (արոսի առատ բերքի տարիներին սինակեռնեխը երբեմն ձմեռում է):

➢ ***Ապրելավայրը*** տարբեր տիպի անտառներն են, զբոսայգիները, այգիները:

➢ ***Սնվում է*** միջատներով, սարդերով, որդերով, փափկամարմիններով, հատապտուղներով, մրգերով: Բնադրման վայրերում հայտնվում է ապրիլին: Սնվում է գետնի վրա, տեղաշարժվում մեծ ցատկերով՝ խոնարհվելով ու վեր բարձրացնելով պոչը: Վտանգի կանչը կտրուկ ճղճղոց-կչկչոց է: Արուի երգը բարձրաձայն սուլոցային մեղեդի է՝ տխուր ելևէջներով: Խորը թասանման բույնը ներսից ամրացվում է կավի կամ հողի շերտով (***երգող կեռնեխի*** տեփուրանման բույնը ծեփված է խոտի փշրունքով), կառուցվում է ոչ շատ բարձր (1-3 մ)՝ երկճեղք ոստերի, կոճղերի, հորիզոնական հաստ ճյուղերի վրա: Ապրիլ-հունիսին դնում է 4-7 ձու: Էգը թխսում է 13-14 օր: Ծնողները ճուտիկներին բնում կերակրում են 12-14 օր և 6-10 օր էլ՝ թռչելուց հետո: Որոշ զույգեր ձվադրում են երկրորդ անգամ: Ձմեռելու վայրեր է թռչում սեպտեմբեր-հոկտեմբերին:



Սպիտակահոնք կեռնեխ
Turdus iliacus .
հոնքը սպիտակ է, թևերի տակ կան շիկակարմիր բծեր

Երգող կեռնեխ
Turdus philomelos



Սինակեռնեխ
Turdus pilaris.
գլուխը և վերնապոչը մոխրագույն-երկնագույն են

Սև կեռնեխ
Turdus merula.
արուն լրիվ սև է՝ վառ դեղին կտուցով, էգը՝ մուգ գորշ

ԱՐՇԱԼՈՒՍԻԿ
Erithacus rubecula



Ճնճղուկից մի քիչ փոքր է: Գլխի վերևը, մեջքը, փետուրները և պոչը ձիթապտղագույն-մոխրագույն են: Այտերը, կոկորդը և կուրծքը ժանգագույն-շիկակարմիր են: Փորիկը սպիտակ է:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր տիպի անտառներն են, զբոսայգիները, այգիները:
- ***Սնվում է*** միջատներով, սարդերով, որդերով, փափկամարմիններով, հատապտուղներով, մրգերով:

Բնադրման վայրերում է հայտնվում ապրիլին: Ապրում է միայնակ կամ զույգերով: Արագ ետ ու առաջ է վազում թփերում: Սնվում է անտառի փոռցում՝ տեղաշարժվելով ցատկերով: Երգը ոչ ռիթմիկ, մարող, ճռվողյունով դայլայլ է: Բույնը փոսիկ է՝ արմատների տակ, թափված ճյուղերի մեջ, ցածր գտնվող փչակներում: Մայիսի վերջին, հունիսի սկզբին դնում է 5-8 ձու: Էգը թխսում է 13-14 օր: Բնում ճուտիկները կերակրվում են 13-14 օր և 7-9 օր՝ թռչելուց հետո: Ձմեռելու վայրեր են թռչում օգոստոսի վերջին, սեպտեմբերին: Եզակի առանձնյակներ են մնում ձմեռելու:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՔԱՐԱԹՌՉՆԱԿ
Oenanthe oenanthe



Աղավնուց մի քիչ է փոքր: Արուի գլխի վերևը և մեջքը մոխրագույն է, աչքերով անցնող շերտը, պոչը և փետուրները՝ սև, մարմնի ներքևը և վերնապոչը՝ սպիտակ: Էգի մարմինը վերևից գորշ-դեղին է, կոկորդը և կուրծքը՝ շիկակարմրավուն:

- ***Բնադրող և չվող*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** բաց լանդշաֆտներն են, շինհրապարակները, թմբերի լանջերը, ամայի տեղերը:
- ***Սնվում է*** անողնաշար կենդանիներով, սերմերով:

Բնադրման վայրեր է հասնում ապրիլի վերջին, մայիսին: Նստած, հաճախ խոնարհվում՝ է վեր բարձրացնում պոչը: Թռիչքը զիգզագանման է՝ ճախրելով: Արուն հաճախ երգում է օդում՝ «կախվելով» տեղում, հետո սավառնում՝ լայն բացելով թևերն ու պոչը: Բույնը կառուցում է որջերում, քարերի ճեղքերում, դատարկ տեղերում: Մայիս-հունիսին դնում է 4-7 ձու: Էգը թխսում է 11-14 օր: Ճուտիկները լքում են բույնը 13-15 օր հետո: Օգոստոսի վերջին սկսում է քոչել դեպի հարավ-արևմուտք, ձմեռելու է թռչում սեպտեմբերի վերջին:

ԵՐԱՇՏԱՀԱՎ
Parus sp.



	Գլխի վերևը	Մեջքը	Փորիկը
Մեծ	Սև	կանաչ	Դեղին՝սև շերտով
Երկնագույն	Երկնագույն	Կանաչ	Դեղին
Սև	Սև-սպիտակ բծով	Մոխրա-գույն-կա-պույտ	Կեղտոտ սպիտակ
Փուփուլա-վոր	Սև-սպիտակ փուփուլ	Գորշ	Կեղտոտ սպիտակ

Բոլոր տեսակների այտերը սպիտակ են: ***Մեծ երաշտահավը*** ճնճղուկի չափ է, մնացածներն ավելի փոքր են: Շարժուն, անդադրուն թռչուններ են:

- ***Նստակյաց*** տեսակներ են:
- ***Ապրելավայրը*** տարբեր անտառները, զբոսայգիները, այգիներն են:
- ***Սնվում են*** միջատներով, թրթուրներով, սերմերով:

Բույնը փչակներում է, զբաղեցնում է նաև սարյակների բները: Ապրիլի վերջին-մայիսին դնում է 6-14 ձու: Էգը թխսում է 13-15 օր: Ճուտիկները բնում մնում են 17-20 օր: Զույգերի մի մասը հունիս-հուլիսին ձվադրում է երկրորդ անգամ: Աշնանը և ձմռանը քոչում են խառը երամներով՝ թռչելով դեպի քաղաքներ, գյուղեր:

Մեծ երաշտահավ
Parus major

Փուփուլավոր երաշտահավ
Parus cristatus

Սև երաշտահավ
Parus ater



Երկնագույն երաշտահավ
Parus caeruleus

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍԻՏԵՂ
Sitta europaea



Ճնճղուկի չափ է: Մարմնի վերևը մոխրագույն է, աչքով անցնում է սև շերտ, կոկորդը սպիտակ է, կողքերը՝ ժանգագույն-շիկակարմիր:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** տարբեր անտառներն են:
- ***Մնվում է*** միջատներով, սերմերով:

Կեր փնտրելիս ճարպկորեն տեղաշարժվում է ծառերի բների վրայով (հաճախ՝ գլուխը դեպի ներքև) և փորում կեղևը: Գարնանային երգը հաճախ կրկնվող սուլոց է, նաև բարձր հաճախակի դայլայլ: Բնի համար ընտրում է փչակը, հազվադեպ՝ սարյակների բները: Բույնը կառուցում է սոճու կեղևի բարակ կտորներից: Ապրիլի վերջին-մայիսին դնում է 6-9 ձու: Էգը թխսում է 13-14 օր: Ծնողները ճուտիկներին բնում կերակրում են 18-20 օր և մոտ երկու շաբաթ էլ՝ թռիչքից հետո: Աշնանը և ձմռանը քոչում է երաշտահավերի երամների հետ:

ԾՎԾՎԻԿ
Certhia familiaris

Ճնճղուկից փոքր է: Մարմնի վերևը շագանակագույն-մոխրագույն է՝ մուգ գորշ պտերով և սպիտակ բծերով, թևերին ու պոչին կան լայնակի բաց գույնի շերտեր: Մարմնի ներքևը սպիտակ է: Նկատելի է սպիտակ հոնքը:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** փշատերև և խառն անտառներն են, հին զբոսայգիները:
- ***Սնվում է*** միջատներով, դրանց թրթուրներով, հազվադեպ՝ սերմերով:

Սնվում է՝ բնի վրայով գալարաձև ներքևից վերև բարձրանալով և ստուգելով կեղևի ճեղքերն ու ճաքերը, այնուհետև թռչում է հարևան ծառի բնի վրա և կրկնում նույն գործողությունը: Արուի գարնանային երգը զրնգուն, բայց ոչ բարձր, արագ, կարճ դայլայլ է: Բույնը կառուցում է փչակում, բնի ճեղքում, պոկված կեղևի հետևում: Ապրիլի վերջին, մայիսին դնում է 4-8 ձու: Էգը թխսում է 13-15 օր, որի ընթացքում արուն կերակրում է նրան: Ճուտիկները բնում մնում են 14-16 օր, իսկ թռչելուց հետո ծնողները շարունակում են կերակրել ևս 1,5-2 շաբաթ: Աշնանը և ձմռանը միանում են երաշտահավերի թափառող երամներին:

ՇԱՀՐԻԿՆԵՐ
Sylvia sp.



Ճնճղուկի չափ կամ մի քիչ փոքր թռչուններ են: Պոչն ուղիղ է, կտուցը՝ կարճ, բզանման: Մարմնի վերևը միագույն մոխրագույն-գորշ է, ներքևը՝ սպիտակ:

- ***Բնադրող և չվող*** տեսակներ են:
- ***Ապրելավայրը*** թփերի մացառուտները, բացատները, հատատեղերը, երիտասարդ անտառներն են:
- ***Սնվում են*** միջատներով, սարդերով, հատապտուղներով:

Բնադրման վայրերում հայտնվում են ապրիլի վերջին, մայիսին: Մացառուտներում արագ տեղաշարժվում են՝ թռչելով թփերի ճյուղերի վրայով: Արուներն ակտիվ երգում են. ***այգու*** և ***սևագլուխ շահրիկներն*** արձակում են մաքուր սուլոցանման դայլայլ, մյուս տեսակները՝ արագ ճռվողյուն:

Բույնը կառուցում են թփուտներում՝ գետնից 60-100 սմ բարձրության վրա: Այն բավական անփույթ, նոսր կառույց է, երբեմն պատերի մեջ ներհյուսած բուսական «աղվամազով»: Մայիսին, հունիսի սկզբին դնում են 4-6 ձու: Թխսում են երկու ծնողներն էլ՝ 12-13 օր: Բնում ճուտիկներին կերակրում են 12-13 օր, ևս 7-10 օր՝ թռչելուց հետո: Սերունդը միանգամայն ինքնուրույն է դառնում հուլիսի վերջին, օգոստոսի սկզբին, և թռչունները քոչում են ողողվող գետահովիտներով և թփերով: Ձմեռելու են թռչում օգոստոս-սեպտեմբերին:


Այգու շահրիկ
Sylvia borin
Մոխրագույն շահրիկ
Sylvia communis
Սևագլուխ շահրիկ
Sylvia atricapilla.
գլխին ունի սև «գլխարկ»
Մորու շահրիկ
Sylvia curruca
Ճուռականման շահրիկ
Sylvia nisoria

ԵՂԵԳՆՈՒՏԻ ԵՂԵԳՆԱԹՌՉՆԱԿ
Acrocephalus schoenobaenus

ՃԱՀՃԱՅԻՆ ԵՂԵԳՆԱԹՌՉՆԱԿ
Acrocephalus palustris

Բավական փոքր են ճնճղուկից: Կտուցը բավական երկար է, ճակատն ու գագաթը՝ տափակ, պոչը՝ կլորավուն: Փետրավորումը միագույն շագանակագույն գորշ է:

- ***Բնադրող և չվող*** տեսակներ են:
- ***Ապրելավայրը*** ջրի մոտ եղեգնի, թփուտների մացառուտներն են:
- ***Սնվում են*** միջատներով, սարդերով:

Բնադրման վայրեր են հասնում մայիսին: Արագ սողոսկում են մացառուտների միջով և ճարպկորեն մագլցում ցողունների վրայով: Բնորոշ առանձնահատկությունն արուների գիշերային երգն է, որը արագ դայլայլ է՝ այլ թռչունների երգերից փոխառած դրվագներով: Բույնը կոնաձև զամբյուղ է՝ կախված խոտաբույսերի, եղեգնի ցողուններից կամ թփուտների խորքում: Մայիսի վերջին, հունիսի սկզբին դնում են 5-6 ձու: Թխսելը տևում է 13-14 օր: Ճուտիկներին կերակրում են 13-15 օր: Օգոստոսի կեսերից սկսում են թռչել ձմեռելու վայրեր:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳԵՂԳԵՂԻԿ
Phylloscopus trochilus
ԾՆԿԼՏԱՆ ԳԵՂԳԵՂԻԿ
Phylloscopus collybita
ՃՌՌԱՆ ԳԵՂԳԵՂԻԿ
Phylloscopus sibilatrix



Ճնճղուկից բավական փոքր են՝ նուրբ, բարակ կտուցներով: Մարմնի վերևը միագույն կանաչավուն, մուգ ձիթապտղագույն է, ներքևը՝ բաց դեղնավուն: Հոնքը բաց գույնի է:

- ***Բնադրող և չվող*** տեսակներ են:
- ***Ապրելավայրը*** լուսավոր անտառները, պուրակները, բացատները, հատատեղերն են:
- ***Սնվում են*** միջատներով, մանր անողնաշար կենդանիներով:

Բնադրման վայրեր են հասնում ապրիլի վերջին, մայիսի սկզբին: Շատ շարժուն թռչուններ են, սնվում են թփուտներում և ծառերի վրա, կտցելով որսը՝ թրթռում են ճյուղերի ծայրերին, միջատներին որսում թռիչքի ժամանակ: Բույնը գնդաձև է կամ հյուղականման՝ մուտքը կողքից, կառուցում են գետնին, երբեմն ցածր թփի վրա: Մայիսին, հունիսի սկզբին դնում են 5-6 ձու: Էգը թխսում է 12-13 օր: Ծնողները ճուտիկներին կերակրում են 11-13 օր: Թռչելուց հետո կերակրում են ևս մեկ շաբաթ: Ինքնուրույն դառնալուց հետո քոչում են անտառները, մինչև սեպտեմբեր՝ ձմեռելու վայրեր:

ԱՐՋՆԱԳՌԱՎ
Corvus corax

Ագռավից բավական մեծ է՝ մանուշակագույն մետաղական փայլով:

- ***Նստակյաց*** տեսակ է:
- ***Սպրեվավայրը*** անտառները, գետահովիտները, կուլտուրական լանդշաֆտներն են:
- ***Սնվում է*** միջատներով, կրծողներով, լեշով:

Հունվար-փետրվարին հարսանեկան խաղերն օդային պիրուետներով (պարելիս արագ պտույտ մեկ ոտքի վրա), վայրընթաց թռիչքներով, հետապնդումներով են: Փետրվար-մարտին բույնը կառուցում է բարձր ծառերին, հենասյուներին կամ նորոգում է հինը: Մարտին, հազվադեպ ապրիլ-մայիսին դնում է 4-6 ձու: Առաջին ձուն դնելուց հետո էգը թխսում է 20 օր: Արուն կերակրում է նրան և հազվադեպ փոխարինում: Ճուտիկները ձվից դուրս են գալիս մարտի վերջին, ապրիլի սկզբին՝ ձյան հալոցքի սկսվելու ժամանակ, երբ շատ լեշ, թույլ և թրջված կենդանիներ են հայտնվում: Ձվից առաջինները դուրս եկած ճուտիկները թռչում են մայիսի սկզբին:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԱՉԱՂԱԿ
Garrulus glandarius

Ճայի մեծության է: Փետրավորումը նոսր է, մարմինը վերևից՝ բալագույն-շագանակագույն, ներքևից՝ վարդագույն-մոխրագույն: Գլխին կա ոչ մեծ, սև-սպիտակ փուփուլ: Պոչը և «բեղերը» սև են, վերնապոչը՝ սպիտակ: Թևերին կան սպիտակ բծեր, իսկ ծալքերին՝ վառ երկնագույն, սև շերտերով փետուրներ:

- ***Նստակյաց և քոչվոր*** տեսակ է:
- ***Ապրելավայրը*** խառը և սաղարթավոր անտառներն են:
- ***Սնվում է*** միջատներով, ձվերով, ընկույզներով, սերմերով, խոզակաղիններով:

Թռիչքն անշտապ է, հանգիստ: Ճարպկորեն թռչկոտում է ճյուղերի վրայով, իսկ գետնին՝ անվստահ ցատկերով: Բույնը կառուցում է ծառի կողմնային ճյուղերին կամ բնի մոտ՝ 2-6 մ բարձրության վրա: Ապրիլի վերջին, մայիսի սկզբին դնում է 4-6 ձու: Երկու ծնողներն էլ թխսում են 17-19 օր՝ առաջին ձուն դնելուց սկսած: Ճուտիկները լքում են բույնը երեք շաբաթ հետո և քոչում ծնողների հետ՝ սկզբում բնադրման վայրի մոտակայքում, հետո՝ ավելի հեռու՝ մոտենալով դաշտերին, մարդաշատ բնակավայրերին, որտեղ էլ ձմեռում են:


Սովորական կաչաղակ
Pica pica
Սովորական ճայ
Corvus monedula
Արջնագռավ
Corvus corax
Մոխրագույն ագռավ
Corvus cornix
Մերմնաքաղ
Corvus frugilegus

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ագռավ մոխրագույն - *Corvus cornix 133*
Աղավնաբազե - *Falco columbarius 57*
Աղավնի անտառային - *Columba palumbus 79*
Ալկիոն երկնագույն - *Alcedo atthis 94,95*
Աղավնի թխակապույտ - *Columba livia 80*
Ամուրիկ - Fringilla coelebs *115*
Այծկիթ - *Caprimulgus europaeus 90,91*
Անտառաբու - *Strix aluco 86*
Անտառակտցար - *Scolopax rusticola 70*
Արագիլ սպիտակ - *Ciconia ciconia 28,29*
Արագիլ սև - *Ciconia nigra 28,29*
Արծիվ սպիտակապոչ - *Haliaeetus albicilla 47*
Արտույտաբազե - *Falco subbuteo 58,59*
Արծիվ օձակեր - *Circaetus gallicus 49*
Արշալուսիկ - *Erithacus rubecula 121*
Արորիկ մեծ - *Numenius arquata 72,73*
Արջնագռավ - *Corvus corax 131,133*
Արտույտ դաշտային - *Alauda arvensis 103*

Բ

Բադ լայնակտուց - *Anas clypeata 40*
Բադ կոնչան - *Anas platyrhynchos 36*
Բադ մոխրագույն - Anas strepera *41*
Բադ նետապոչ - *Anas acuta 40*
Բադ շչան - *Anas penelope 41*
Բադ սղոցակտուց մեծ - *Mergus merganser 44*
Բադ սղոցակտուց - *Mergus serrator 45*

Բազե կարմրաոտ - *Falco vespertinus 57*
Բազե հողմավար սովորական - *Falco tinnunculus 58*
Բվեճ - *Bubo bubo 85*
Բվիկ տնային - *Athene noctua 89*
Բու ականջավոր - *Asio otus 87*
Բու ճահճային - *Asio flammeus 87*
Բու թավշաոտ - *Aegolius funereus 89*

Գ

Գեղգեղիկ գարնանային - *Phylloscopus trochilus 130*
Գեղգեղիկ ծնկլտան - *Phylloscopus collybita 130*
Գեղգեղիկ ճռռան - *Phylloscopus sibilatrix 130*

Դ

Դրախտապան սովորական - *Emberiza citrinella 104*

Ե

Եղեգնահավ - *Gallinula chloropus 64*
Եղեգնաթռչնակ եղեգնուտի - *Acrocephalus schoenobaenus 129*
Եղեգնաթռչնակ ճահճային - *Acrocephalus palustris 129*
Ենթարծիվ մեծ - *Aquila clanga 46*
Երաշտահավ երկնագույն - *Parus caeruleus 123,124*
Երաշտահավ մեծ - *Parus major 123,124*
Երաշտահավ սև - *Parus ater 123,124*
Երաշտահավ փուփուլավոր - *Parus cristatus 123,124*

Ժ

Ժուլան - *Lanius collurio 109*

Ի

Իլիկակտցար մեծ - *Limosa limosa 72,73*

Լ

Լորաճուռակ - *Accipiter nisus 54,55*

Լուտոկ - *Mergus albellus 45*

Խ

Խածկտիկ սովորական - *Pyrrhula pyrrhula 118*

Խաղտտնիկ սպիտակ - *Motacilla alba 105*

Խաչկտուց եղևնու - *Loxia curvirostra 117*

Ծ

Ծիծեռնակ առափնյա - *Riparia riparia 111,112*

Ծիծեռնակ գյուղական - *Hirundo rustica 111,112*

Ծվծվիկ - *Certhia familiaris 126*

Ծիծեռնակ քաղաքային - *Delichon urbicum 111,112*

Կ

Կաչաղակ անտառային - *Garrulus glandarius 132*

Կաչաղակ սովորական - *Pica pica 133*

Կարապ ճչան - *Cygnus cygnus 34*

Կարմրակատար - *Carduelis carduelis 116*

Կաքավ մոխրագույն - *Perdix perdix 60* ,61

Կեռնեխ երգող - *Turdus philomelos 120*

Կեռնեխ սպիտակահոնք - *Turdus iliacus 120*

Կեռնեխ սև - *Turdus merula 120*

Կիվիվ սովորական - *Vanellus vanellus 77,78*

Կռունկ մոխրագույն - *Grus grus 62*

Կռվակտցար - *Philomachus pugnax 74,75*

Կտցար ծխագույն - *Tringa nebularia 76*

Կտցար կաչաղակ - *Haematopus ostralegus 77,78*

Կտցար սևուկ - *Tringa ochropus 76*

Կկու սովորական - *Cuculus canorus 83*

Կրետակեր - *Pernis apivorus 49*

Կրկնակտցար - *Gallinago media 71*

Հ

Հատբեկիչ - *Coccothraustes coccothraustes 117*
Հոբալ - *Columba oenas 80*
Հոպոպ - *Upupa epops 96,97*

Ձ

Ձիաթռչնակ անտառային - *Anthus trivialis 106*

Ճ

Ճահճահովվիկ գաճաճ - *Porzana pusilla 63*
Ճահճահովվիկ եվրոպական - *Porzana parva 63*
Ճահճահովվիկ մեծ - *Porzana porzana 63*
Ճայ սովորական - *Corvus monedula 133*
Ճանճորս խայտաբղետ - *Ficedula albicollis 113*
Ճանճորս մոխրագույն - Muscicapa striata *114*
Ճուռակ թավշաոտ - *Buteo lagopus 49*
Ճուռակ սովորական - *Buteo buteo 48*

Մ

Մանգաղաթև սև - *Apus apus 92,93*
Մարգահավ - *Crex crex 65*
Մեղվակեր ոսկեգույն - *Merops apiaster 94,95*
Մկնաճուռակ դաշտային - *Circus cyaneus 53*
Մկնաճուռակ ճահճային - *Circus aeruginosus 52*
Մկնաճուռակ մարգագետնային - *Circus pygargus 53*
Մորակտցար - *Gallinago gallinago 71*
Մրտիմն սուլող - *Anas crecca 38*
Մրտիմն ճքճքան - *Anas querquedula 38,39*

Ն

Ներկարար - *Coracias garrulus 96,97*

Շ

Շահրիկ այգու - *Sylvia borin 128*

Շահրիկ մոխրագույն - *Sylvia communis 128*

Շահրիկ մորու - *Sylvia curruca 128*

Շահրիկ ճուռականման - *Sylvia nisoria 128*

Շամփրուկ մոխրագույն - *Lanius excubitor 109,110*

Շահրիկ սևագլուխ - *Sylvia atricapilla 128*

Ո

Որոր թխակապույտ - *Larus canus 67*

Որոր հայկական - *Larus armenicus 67*

Որոր սովորական - *Larus ridibundus 66*

Որոր փոքր - *Larus minutus 66*

Պ

Պիրոլ - *Oriolus oriolus 108*

Ջ

Ջրարծիվ - *Pandion haliaetus 51*

Ջրածիծառ գետային - *Sterna hirundo 68*

Ջրածիծառ սպիտակաթև - *Chlidonias leucopterus 69*

Ջրածիծառ սև - *Chlidonias nigra 69*

Ջրածիծառ փոքր - *Sterna albifrons 68*

Ջրահովվիկ - *Rallus aquaticus 65*

Ջրցուլ մեծ - *Botaurus stellaris 32*

Ջրցուլ փոքր - *Ixobrychus minutus 32*

Ս

Սագ մոխրագույն - *Anser anser 34*

Սապսան - *Falco peregrinus 56*

Սարյակ սովորական - *Sturnus vulgaris 107*

Սերմնաքաղ - *Corvus frugilegus 133*

Սինակեռնեխ - *Turdus pilaris 120*

Սիտեղ սովորական - *Sitta europaea 125*
Սրնգահավ - *Bombycilla garrulus 118*
Սոնաբադ - *Bucephala clangula 42*
Սուզաբադ փուփուլավոր - *Aythya fuligula 43*
Սուզաբադ կարմրագլուխ - *Aythya ferina 43*
Սուզակ կարմրավիզ - *Podiceps auritus 27*
Սուզակ մեծ - *Podiceps cristatus 24*
Սուզակ մոխրաայտ - *Podiceps griseigena 26*
Սուզակ սևավիզ - *Podiceps nigricollis 27*
Սուզահավ կարմրախածի - *Gavia stellata 23*
Սուզահավ սևախածի - *Gavia arctica 23*

Վ

Վիզգցուկ - *Junx torquilla 102*

Տ

Տառեղ մոխրագույն - *Ardea cinerea 30*
Տատրակ սովորական - *Streptopelia turtur 81,82*
Տատրակ օղակավոր - *Streptopelia decaocto 81,82*

Ց

Ցին սև - *Milvus migrans 50*
Ցախաքլորարոս - *Accipiter gentilis 54,55*

Փ

Փայտփոր խայտաբղետ - *Dendrocopos major 99*
Փայտփոր սպիտակամեջք - *Dendrocopos leucotos 101*
Փայտփոր սև - *Dryocopus martius 98*
Փայտփոր փոքր - *Dendrocopos minor 101*
Փարփար սև - *Fulica atra 64*

Ք

Քարադր փոքր - *Charadrius dubius 74,75*
Քարաթռչնակ սովորական - *Oenanthe oenanthe 122*
Քարարծիվ - *Aquila chrysaetos 46*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Ադամյան, Դ. Քլեմ Կրտսեր. Հայաստանի թռչունները, (դաշտային ուղեցույց), Հայաստանի ամերիկյան համալսարան, 2000:
2. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք: Երևան, 2010.
3. Жизнь животных. Т.6. М.: Просвещение, 1985.
4. Беме Р. Л. и др. Птицы. М., ABF, 1997.
5. Биологический энциклопедический словарь. М., 1986.
6. Второв П. П., Дроздов Н. Н., Определитель птиц фауны СССР. М., 1980.
7. Иванов А. И., Штегман Б. К., Краткий определитель птиц СССР. Л., Наука, 1978.
8. Кузнецов Б. А., Определитель позвоночных животных фауны СССР (Часть 2. Птицы). М., Просвещение, 1974.
9. Михеев А. Б., Биология птиц. Полевой определитель птичьих гнезд. М., Цитадель, 1996.
10. Ошмарин П. Г., Пикунов Д. Г., Следы в природе. М., Наука, 1990.
11. Птицы СССР (под ред. Ильичева В. Д., Флинта В. Е.). М., Наука, Т. 5, 1993.
12. Формозов А. Н., Спутник цледопыта. М., МГУ, 1989.
13. Храбрый В. М., Школьный атлас-определитель птиц. М., Просвещение, 1988.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թռչունների դիտումը բնության մեջ 3
Թռչնի արտաքին կառուցվածքը 5
Թռչունների դասակարգումը ըստ ապրելավայրի բնույթի
և սեզոնային տեղաշարժերի 6
Վարքի առանձնահատկությունները.....7
Փետրավորման գունավորումը.....9
Թռչունների որոշումը տեսքով 11
Թռչունների նկարագրերը 22
Թռչունների տեսակների ցանկ 134
Գրականություն.....140

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Է. Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԹՌՉՈՒՆՆԵՐ
ՀԱՄԱՌՈՏ ԴԱՇՏԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 11.10.2017:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 8,875:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am